



THE BEST BANK OF 2010 IN ARMENIA

2010Թ. ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿԸ
ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ



FINANCIAL
TIMES

FINANCIAL
TIMES



The
Banker

բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.tax.nk.am



6



14



18



30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

6

- 6 ՊԵԿ պատվիրակությունն Արցախում
 Համագործակցությունը զարգանում է, եռամյա ծրագիրը՝ կատարվում

tax ԼՈՒՐԵՐ

8

- 8 Նոր որակ՝ ազգային մոտեցումներով
 ԼՂՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյան. «Հայկական ճարտարապետությունը՝ նոր ընտրության առաջ. ավանդական սկզբունքներ, թե՛ նոր մոտեցումներ»

tax ՌԵՊՈՐՏԱԺ

12

- 12 Երբ Արցախում նոր օջախի լույս է վառվում...
 14 Վերահսկողն ու գնահատողը հասարակությունն է
 Ստեփանակերտի հարկային տեսչության 1 օրը

tax ՕՐԵՆՔ

18

- 18 Հունվարի 1-ից հարկային դաշտում մի շարք օրենքներ են փոխվել

tax top

22

- 22 Գերակատարումների՝ 2010-ի մոդելը
 Ներկայացնում է ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետ Արտակ Բալայանը

tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ


26

- 26 ԼՂՀ խոշոր հարկատուները

tax ԲԻԶՆԵՍ

30

- 30 Հասնել հաջողության՝ հաղորդակցության նոր մոտեցումներով
 Հարցազրույց «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հետ



34



48



50



53

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ . . .

- 34 **Brendan Bracken-ի արձանիկը՝ «Ամերիաբանկ»-ին**
Ինչի՞ շնորհիվ է ԼՂՀ-ում աճում «Ամերիաբանկ»-ի վարկանիշը՝ ըստ Ստեփանակերտի մասնաճյուղի կառավարիչ Գ.Կադարյանի
- 38 **Արցախյան արտադրանքը գերել է ռուսներին ու արաբներին**
Հարցազրույց գործարար Մելսոն Սարգսյանի հետ

tax NON ստանդարտ

40

- 40 **Շվից, Ֆլեգվի, Ջերսեյ**
«Ազնվական» ծագում ունեցող կովերը՝ «Տոհմային կայան»-ում

tax ՈՒՈՐՏ

42

- 42 **«Արցախկաթ»-ը տեղում չի դոփում**
- 44 **Արցախի 48-րդ հարկատու «Լուսակերտ»-ը արտադրության ծավալները հասցնելու է տարեկան հազար տոննայի**
- 46 **«Կյանք»-ը Հադրուկում զարգացել և առաջ է գնում**
- 48 **Թվային քարտեզն ու սենսորային տաղավարները կլինեն զբոսաշրջիկների «աչ ձեռքը»**
Արցախը զբոսաշրջիկներին դիմավորելու է տեղեկատվական նոր ուղեցույցներով. հարցազրույց ԼՂՀ զբոսաշրջության վարչության պետ Ս.Շահվերդյանի հետ

tax LUX

50

- 50 **Բոլոր ճանապարհները բերում են «Արմենիա». հարմարավետության և շքեղության համադրություն**
«Հասնելու ենք կատարելության և հյուրանոցային միջազգային չափանիշների», - հայտարարում է «Ալյուս գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ռուդոլֆ Առաքելյանը

tax ԱՇԽԱՐՀ

54

- 54 **Աշխարհի ամենահետաքրքիր հյուրանոցները**
- 56 **Ստորջրյա յուրահատուկ հյուրանոցները**

www.tax.nk.am



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 1(3) 2011

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Շաքե Ղազարյան
Արմինե Մուսայելյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 2-րդ տարի
Ծավալը՝ 56 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
07.02.11

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցումն
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:



Յայկական երկու հանրապետությունների հարկային համակարգերի փոխգործակցությունը պետք է էլ ավելի ակտիվանա և զարգանա. այս համոզմունքն է հայտնել ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը՝ ընդունելով Արցախ այցելած ՀՀ ՊԵԿ պատվիրակությանը՝ կառույցի ղեկավար Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ:

«Պետք է այսուհետ էլ պահպանել համագործակցության առկա մակարդակը և զարգացնել այն», - ընդգծել է երկրի ղեկավարը՝ հատկապես կարևորելով կադրերի պատրաստումն ու վերա-

«Պետք է այսուհետ էլ պահպանել համագործակցության առկա մակարդակը և զարգացնել այն», - ընդգծել է երկրի ղեկավարը՝ հատկապես կարևորելով կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, Արցախում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, ինչը տնտեսության զարգացման հիմնական պայմաններից է:

պատրաստումը, Արցախում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, ինչը տնտեսության զարգացման հիմնական պայմաններից է: Պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունն Արցախում էր հերթական աշխատանքային այցով:

Ի՞նչ փուլում է համագործակցության միջոցառումների եռամյա ծրագիրը,

որը ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև ստորագրվել է 2009-ի մարտին: Ի՞նչ է արվել դրանով նախանշված ուղղություններով և ի՞նչ քայլեր է պետք ձեռնարկել այսուհետ:

Բոլոր հարցերը ՊԵԿ պատվիրակության անդամները քննարկել և վերլուծել են արցախյան գործընկերների հետ՝ վերհանելով ծագած խնդիրները և հնա-



րավոր լուծման տարբերակներ փնտրելով նաև տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հետ անմիջական շփումների միջոցով: Նման քննարկումները պարբերական բնույթ են կրում. պետական եկամուտների կոմիտեի ղեկավարությունն Արցախ էր այցելել նաև ծրագրի ստորագրումից շուրջ մեկուկես տարի անց և ամփոփել այդ ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

Հարկային մարմինների միջև ստորագրված եռամյա ծրագիրը սերտ համագործակցություն է ենթադրում. այն նախատեսում է մի շարք համատեղ միջոցառումների իրականացում:

Հաստատված ծրագիրը հնարավորություն է տալիս մասնագետներին և աշխատանքային խմբերին փոխադարձ այցելություններ կատարել, ուսումնասիրել, թե ինչպես է գործնականում կիրառվում հարկային օրենսդրությունը, վերլուծել ծագող խնդիրները և դրանց լուծման ուղիներ փնտրել:

Արցախի հարկային ծառայողները նաև ներգրավվում են ՀՀ ՊԵԿ-ի կողմից կազմակերպվող որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացներին: Կատարվում է նաև ատեստա-

մը: Այստեղ խոսքը նաև համակողմանի օժանդակության և տեղեկատվական բազաներում առկա տեղեկությունների փոխադարձ տրամադրման մասին է:

Ծրագիրն, իհարկե, չի շրջանցում նաև հարկային իրավախախտումների կանխարգելման ու բացահայտման նպատակով համատեղ գործողությունների կազմակերպումն ու անցկացումը: Ուշադրության կենտրոնում է պահվում մեթոդական ու գործնական օժանդակության ցուցաբերումը ոլորտային ստուգումների կազմակերպման, հարկային հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում:

Բացի այդ, կազմակերպվում են օրենսդրական և այլ ակտերի նախագծերի հա-

տրամադրում ՀՀ-ի հարկային պետական ծառայությանը:

Ծրագրի շրջանակներում այս ընթացքում պարբերաբար կազմակերպվել են ՀՀ և ՀՀ աշխատանքային խմբերի փոխադարձ այցելություններ, որոնց ընթացքում քննարկումներ են կազմակերպվել դատաիրավական, տեղեկատվական տեխնոլոգիաների, հարկային վարչարարության կատարելագործման, հարկ վճարողների սպա-

սարկման, հսկողության և մի շարք այլ ուղղություններով: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Արցախի գործընկերներին ցուցաբերել է նյութատեխնիկական օժանդակություն:



Հարկային մարմինների միջև ստորագրված եռամյա ծրագիրը սերտ համագործակցություն է ենթադրում. այն նախատեսում է մի շարք համատեղ միջոցառումների իրականացում:

ՀՀ ՊԵԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Համագործակցությունը զարգանում է, եռամյա ծրագիրը՝ կատարվում

վորման և մրցույթների կազմակերպման ու անցկացման փորձի փոխանակում: Համագործակցության ծրագրի կարևոր կետերից է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացու-

մատեղ քննարկումներ, կարծիքների փոխանակում, ՀՀ միջպետական համաձայնագրերի շրջանակներում անհրաժեշտության դեպքում հարցումների իրականացում և տեղեկատվության

ՆՈՐ ՈՐԱԿ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՎ

«Հայկական ճարտարապետությունը
կանգնած է նոր ընտրության առաջ.
ինչպիսի՞ն պետք է լինի ազգայինը նոր
դարաշրջանում՝ ավանդական սկզբունքներին
հավատարի՞մ, թե՞ այլ մոտեցումներ են
պետք», - իր դիտարկումներով կիսվել է
ԼՂՀ Զաղաքաշինության նախարար
Կարեն Շահրամանյանը





- Պրն Շահրամանյան, ի՞նչ եզրահանգման ենք գալիս՝ վերլուծելով անցած տարին. որո՞նք էին շինարարության բնագավառի գերակա ուղղությունները:

- Զաղաքաշինությունը տնտեսության այն գլխավոր ոլորտներից է, որն առնչվում է հասարակության անմիջական կենսական շահերի հետ: Արցախում այս ոլորտը խիստ պատասխանատու փուլ է թևակոխել՝ արձանագրելով էական առաջընթաց: Որպես օրինակ կարող եմ մատնանշել վերջին զարգացումները, որոնք էլ իրենց հերթին նոր անելիքներ են պահանջում: Միայն հսկայական ջանքեր ներդնելով է հնարավոր առաջ գնալ և ապահովել զարգացում:

Ինչ վերաբերում է շինարարության բնագավառի՝ 2010-ի գերակա ուղղություններին, ապա պետք է նշեմ, որ Արցախում առաջնային են բնակարանաշինությունը, կրթական, մշակութային և մարզական կենտրոնների կառուցումը, ճանապարհաշինությունը և այլն:

Անցած տարի, ինչպես գիտեք, շարունակվել են զոհված ազատամարտիկների, վերաբնակիչների և բազմազավակ ընտանիքների բնակարանների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները:

Կառուցվել են նոր դպրոցներ, իսկ մի մասն էլ հիմնովին վերանորոգվել է:

Հսկայական աշխատանք է կատարվել ճանապարհաշինության բնագավառում: Ճանապարհային ենթակառուցվածքը միանշանակ արտացոլում են տվյալ պետության տնտեսության զարգացման մակարդակը: Եվ, բնականաբար, ավտոճանապարհների որակի և երկարակեցության ապահովումը կարևորագույն և օրակարգային խնդիր է: Այս առումով մեր ունեցած հաջողությունները կարելի է դիտարկել ոլորտում մասնագիտացած այնպիսի ընկերության օրինակով, ինչ-

պիսին «Արցախուղի»-ն է. ճանապարհների շահագործումն ու պարբերական վերանորոգումն այս կազմակերպության գործառնությունն են: Մինչ այս այդ աշխատանքները որևէ կապալառու կազմակերպության կողմից ծրագրային բնույթ չեն կրել, ինչի հետևանքով ունենք այն, ինչ ունենք՝ ճանապարհների անմխիթար վիճակ: Վերադառնում ենք կենտրոնացված շահագործմանը, որը հնարավորություն է տալիս տիրապետել

Այս տարի ևս ուշադրության կենտրոնում կլինեն բնակարանաշինությունը, կրթական, մշակութային և մարզական կենտրոնները, հասարակական նշանակության օբյեկտները, կոմունալ շինարարությունն ու ճանապարհաշինությունը:

իրավիճակին, ունենալ ամբողջական տեղեկատվություն հանրապետության ճանապարհների իրավիճակի մասին:

- Ինչպե՞ս կգնահատեք այսօրվա ճարտարապետությունը:

Ձեր դիտարկմամբ, ո՞րքան ժամանակ կպահանջվի խորհրդային ճարտարապետությունից եվրոպականին անցնելու համար:

- Հայկական ճարտարապետությունն այսօր կանգնած է նոր ընտրության առաջ. ինչպիսի՞ն պետք է այն լինի 21-րդ դարում՝ ենթարկվի՞ համաշխարհային գլոբալացման պահանջներին՝ դառնալով եվրոպական չափանիշներին համապատասխան, թե փորձի պահպանել ազգային դիմագիծը: Կամ ինչպիսի՞ն պետք է լինի ազգայինը նոր դարաշրջանում՝ ավանդական սկզբունքներին հավատարի՞մ, թե բոլորովին այլ մոտեցումներ են պետք: Անշուշտ, բոլոր նորակառույց շինությունները՝ բնակելի, հասարակական, վարչական, արդյունաբերական շենքերը, կամուրջները, հուշարձանները պետք է լինեն հարազատ մեր ազգային ոգուն, հավատարիմ ազգային

ավանդույթներին և ներդաշնակ հայոց բնության հետ: Մինչդեռ, անհրաժեշտ է՛լ ավելի սրտացավ գտնվել մեր իսկ միջավայրում վտանգի ենթարկված կառույցների անմխիթար վիճակի, կատարվող անկանոն վերակառուցումների, աղավաղումների, մարդկանց անհոգի, երբեմն նույնիսկ վայրագ վերաբերմունքի նկատմամբ: Մենք մտահոգված ենք նաև արդի հայ ճարտարապետության ու քաղաքաշինության մեջ տիրող իրավիճակով, մեր քաղաքների անկանոն կառուցապատմամբ:

- Ճարտարապետական կոթողների վերականգնման ի՞նչ ծրագրեր ունեք: Այստեղ, կարծես թե, լուրջ քայլերի անհրաժեշտություն կա:

Մասնավորապես մեր Շուշիի վերականգնման առումով ի՞նչ է նախատեսվում: Ե՛վ որպես քաղաքաշինության ոլորտի պատասխանատու, և՛ որպես հայ, ինչպե՞ս եք պատկերացնում մշակութային հարուստ ավանդույթներով Շուշին՝ մի քանի տարի անց:

- Շուշիի վերականգնման խնդիրն այսօր հրատապ է ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում և Սփյուռքում: Մեր նպատակն է պաշտպանել, պահպանել, բարեկարգել և խնամել քաղաքի այն կառույցները, տեղանքներն ու թաղամասերը, որոնք արտացոլում են Շուշիի պատմական, ճարտարապետական, մտավորական, քաղաքական, տնտեսական և ընդհանուր մշակութային ժառանգությունը, նպաստել Շուշիի ներդաշնակ և արդյունավետ զարգացմանը: Շուշին պետք է վերականգնվի հարուստ պատմաճարտարապետական ժառանգությանը համահունչ: Քաղաքի այսօրվա տեսքը, որում ի սպառ բացակայում են հայոց պատմական թաղամասերը, աղավաղվել է դեռևս խորհրդային տարիներին: Կարևորելով Շուշիի պատմական դիմագծի լիարժեք վերականգնումը՝ ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչությունը պատվիրել է Շուշիի պատմամշակութային հիմնավորման նախագիծ. կընտրվեն քաղաքի այնպիսի տարածքներ, թաղամասեր, փողոցներ, որոնց վերականգնման համար կմշակվեն նախագծեր: Այդպիսով, կարծում եմ, կկարո-



- Փոխվել է ուշադրությունը: Շինարարության որակը կառուցապատողներին, նախագծողներին և շինարարներին մշտապես հուզող հարց է: Այս ոլորտի նկատմամբ ևս ուշադրությունն ամենաբարձր մակարդակով է. քաղաքաշինությունը երկրի ղեկավարի մշտական հսկողության ներքո է: Միաժամանակ պետք է նշեմ, որ վերահսկողության վերաբերյալ կարգն այսօրվա պայմաններին պետք է համապատասխանեցվի, քանի որ այն մշակվել է դեռևս 1999թ.-ին: Ընդհանուր առմամբ, փոխվել է վերաբերմունքը՝ դեպի աշխատանքը՝ ձգտում ենք ավելի հավասարակշռված, ավելի ճիշտ մոտեցում ցուցաբերել ոլորտի նկատմամբ, բացառել անորակ շինարարությունը:

Ճանապարհային ենթակառուցվածքը միանշանակ արտացոլում են տվյալ պետության տնտեսության զարգացման մակարդակը: Եվ, բնականաբար, ավտոճանապարհների որակի և երկաթուղային ապահովումը կարևորագույն և օրակարգային խնդիր է:

Կառուցվել են նոր դպրոցներ, իսկ մի մասն էլ հիմնովին վերանորոգվել է:

մեր շարքերում տեղ չունեն անպատասխանատու և անբերիխիղ շինարարները: ☑

ղանակը պահպանել Շուշիի հարուստ պատմաճարտարապետական ժառանգությունը և վերականգնել քաղաքի կառուցապատումը՝ պատմական բնութագրին համահունչ: 2010թ.-ին մեծածավալ աշխատանքներ են կատարվել Շուշիի մշակութային կենտրոններում և կրթօջախներում, որոնց հիմքում մեր ազգայինը վերականգնելն է: Միաժամանակ մեր ուշադրության կենտրոնում են հանրակացարանների, բազմաբնակարան շենքերի վերանորոգումն ու վերակառուցումը: Շուշիի բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվերով:

յին և մարզական կենտրոնները, հասարակական նշանակության օբյեկտները, կոմունալ շինարարությունն ու ճանապարհաշինությունը:

- Պարոն Շահրամանյան, իսկ վերահսկողության մասով ի՞նչ է փոխվել ոլորտում:

- Պարոն Շահրամանյան, այս տարվա ծրագրով շինարարական աշխատանքներն ի՞նչ ուղղվածություն ունեն: Որքա՞ն գումար է քաղաքաշինությանը հատկացվել պետբյուջեով:

- Արդեն պատրաստ է 2011թ. պետական բյուջեի միջոցների հաշվին կապիտալ ներդրումների պետական պատվերի նախնական ծրագրի նախագիծը՝ շուրջ 10.7 մլրդ գումարով: Այս տարի ևս ուշադրության կենտրոնում կլինեն բնակարանաշինությունը, կրթական, մշակութա-



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Մարտ

I	II	III	IV	V	VI	VII
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

Ստեփանակերտն այսօր այլ է, ավելի ճիշտ՝ այն բոլորովին փոխվել է. սա այն արտահայտություններից է, որ, որպես կանոն, լսում ենք Արցախի հաճախ այցելող զբոսաշրջիկներից: Փոփոխություններն ակնհայտ են՝ ամեն անգամ այստեղ այցելելիս. այսօրնոր դպրոց է շահագործվում, վաղը՝ մանկապարտեզ կամ հիվանդանոց, կարճ ժամանակ անց դրանց կողքին արդեն զբոսայգի կա, շատրվաններ: Փողոցի մյուս կողմում էլ ավարտին է հասցվում ժամանակակից բիզնես կենտրոնի շինարարությունը: Ամենակարևորը՝ արցախցիների աչքերում լույս կա, քանի որ լույս կա արդեն նաև Նրանց օջախներում՝ նոր բնակարաններում... Եվ այս ամենը շարունակական է, քանի որ կա երկրի ղեկավարության մտահոգությունը, հոգատարությունն ու մշտական ուշադրությունը:

**ԵՐԲ ԱՐՅԱԽՈՒՄ ՆՈՐ
ՕԶԱԽԻ ԼՈՒՅՍ Է ՎԱՌՎՈՒՄ...**



«Պանտ» անվանումն արցախցիներից շատերը գուցե և չեն լսել, բայց հաստատ հիանում են այս ընկերության աշխատանքի արդյունքներով և, իհարկե՝ նաև վայելում: Արցախի շինարարության շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնող «Պանտ»-ն ամենուր է՝ տարբեր ոլորտներում: Ընկերության գործունեությունն ընդգրկում է և՛ քաղաքաշինության, և՛ էներգետիկ ոլորտները: Այս տարիների ընթացքում «Պանտ»-ի շնորհիվ նորակառույց մի շարք բնակարանների, կրթօջախների, մանկապարտեզների, առողջապահական հաստատությունների ժապավեններ են կտրվել, կառուցվել են գազամատակարարման համակարգեր:

Խոսելով կատարված աշխատանքի մասին՝ ընկերության ղեկավար Սերգեյ Յարությունյանն ընդգծում է, որ բոլոր կառույցներում շինարարությունն իրականացվել է բացառապես ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Արդյունքում քաղաքացիները վայելում են գեղագիտական տեսքով և անհրաժեշտ բոլոր պայմաններով հարմարավետ կառույցներ:

Ոչ միայն Սերգեյ Յարությունյանի, այլև ընկերության բոլոր շինարարների համար երկար սպասված պահերից է, երբ հատկապես բնակելի շենք է շահագործման հանձնվում: Այս թեման ընկերության ղեկավարը նրբորեն փորձում է շրջանցել՝ հուզմունքը թաքցնելու համար, բայց միևնույն է՝ չի ստացվում, հուզվում է. «Իմ զգացողությունները դժվարանում եմ երկու բառով արտահայտել... Միայն ասեմ, որ ամեն անգամ՝ նորակառույցի կողքով անցնելով և պատուհաններում օջախի լույս տեսնելով, ավելի եմ ոգևորվում՝ չհամբերելով, թե հերթական բնակելին երբ ենք շահագործման հանձնելու: Մասնակցություն ունենալ մարդկանց կենցաղային պայմանների բարելավմանը՝ սա բոլորովին այլ զգացողություն է»...

Խոշոր հարկ վճարողների ցանկում ընկերությունը առաջատարներից է. 2010 թվականի արդյունքներով այն զբաղեցրել է 12-րդ հորիզոնականը:

Կազմակերպության աշխատակիցները գիտեն՝ բոլոր դեպքերում կա թիվ մեկ պայման՝ որակ: Սա առանձնահատուկ է շեշտադրվում՝ դառնալով հայտնի գործելաոճ: «Շինարարության բարձր որակի ապահովման համար կարևոր է տեխնոլոգիական ամ-



Այս տարիների ընթացքում «Պանտ»-ի շնորհիվ նորակառույց մի շարք բնակարանների, կրթօջախների, մանկապարտեզների, առողջապահական հաստատությունների ժապավեններ են կտրվել, կառուցվել են գազամատակարարման համակարգեր:

բողջ շղթան՝ ճարտարապետական առաջադրանքի գրագետ կազմումից մինչև հարդարման աշխատանքները», - նշում է Ս. Յարությունյանը:

Մեկ անգամ չէ, որ ընդգծվել է՝ «Պանտ»-ի դռները բաց են միայն որակյալ և պարտաճանաչ մասնագետների համար: Թերևս նաև այդ հանգամանքն է նպաստում, որ ցանկացած օբյեկտի շինարարություն ավարտին է հասցվում նախանշված ժամկետներում և, իհարկե, անթերի, հետևաբար, մարդկանց վստա-

հույթունն էլ ընկերության նկատմամբ երաշխավորված է:

«Մենք հստակ գիտակցում ենք հարկերի ունեցած դերը մեր Արցախի տնտեսության զարգացման գործում, դրա կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ պետական և սոցիալական նշանակության ծրագրեր իրագործելիս: Այդ իսկ առումով մենք առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքով՝ հարկային պարտավորությունների ժամանակին և ճիշտ կատարում»:

ՎԵՐԱՀՍԿՈՂՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՂԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Ստեփանակերտի հարկայինը սպասարկվող հարկ վճարողների քանակով ամենամեծ տեսչությունն է: Այստեղ այս տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է 4096 հարկ վճարող:





«Լուրջ առաջընթացը մեր հարկատուների վերաբերմունքով և մոտեցումներով է պայմանավորված»

Հարցազրույց Ստեփանակերտի հարկային տեսչության պետի պաշտոնակատար Արայիկ Դոլուխանյանի հետ

- Պարոն Դոլուխանյան, Դուք շուրջ 12 տարի աշխատում եք հարկային համակարգում և, բնականաբար, այն պաշտոնյաներից եք, ով շատ լավ ծանոթ է բոլոր նրբություններին: Ձեր դիտարկմամբ, էական ի՞նչ առաջընթաց է արձանագրվել այս համակարգում հատկապես վերջին տարիներին:

- Այն, որ առաջընթացը չի շրջանցել մեր համակարգը՝ միանշանակ ակնհայտ է: Վերջին տարիներն մեզ հաջողվել է շատ լուրջ արդյունքներ արձանագրել, իսկ դա առաջին հերթին հասա-

րակության վերաբերմունքով ու մոտեցումներով է պայմանավորված: Հենց նա է բոլոր գործընթացների առաջին և կարևոր քննադատը, վերահսկողն ու գնահատական տվողը, և եթե այս կամ այն քայլն ընդունվում է լայն խավերի կողմից, մենք թեթևացած շունչ ենք քաշում՝ հաջողությունը երաշխավորված է:

Դա օրինաչափություն է: Այսօր մեր գործունեության հիմքում արդյունավետ մի

շարք սկզբունքներ են, նոր մշակված մեթոդներ, մի խոսքով՝ նոր գործելաոճով ենք առաջ գնում: Մասնավորապես, մենք ձգտում ենք հարկային մարմնի

Եթե այս կամ այն քայլն ընդունվում է լայն խավերի կողմից, մենք թեթևացած շունչ ենք քաշում՝ հաջողությունը երաշխավորված է:

աշխատանքներին ներգրավել հասարակական ուժերին, հարկ վճարողների իրազեկման

աշխատանքներն ընդլայնել, սպասարկման մակարդակը բարելավել, վարչա-



րարությունը կատարելագործել՝ վերլուծության մեթոդների կիրառմամբ. այս ամենի արդյունքում ունենում ենք ընդհանուր պատկերի օբյեկտիվ գնահատական:

- Ի՞նչ ցուցանիշներով է Արցախի ամենամեծ հարկային տեսչությունն ամփոփել 2010թ.-ը: Եթե չեն սխալվում, հարկային մուտքերը ոչ միայն ապահովել, այլ նաև գերակատարել եք:

- Այո, արձանագրված ցուցանիշները բավականին խոսուն են: 2010թ.-ին մեր տեսչության կողմից հավաքագրվել են 3495.1մլն դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, այն դեպքում, երբ պլանային առաջադրանքը 3331.0մլն դրամ էր: Իսկ դա նշանակում է, որ, այո, ծրագրված ցուցանիշը գերակատարել ենք 164.1մլն դրամով /104.9%/. Նախորդ տարվա համեմատ հավաքագրվել է 10.5%-ով կամ 331.8մլն դրամով ավել:

Ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 2165.2մլն դրամ կամ պլանային ցուցանիշի 105.9%-ը՝ ավել 121.0մլն դրամով, իսկ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ գերակատարումը 233.9մլն դրամ /112.1%/ է կազմում:

2010թ.-ին մեր տեսչության կողմից հավաքագրվել են 3495.1մլն դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, այն դեպքում, երբ պլանային առաջադրանքը 3331.0մլն դրամ էր: Իսկ դա նշանակում է, որ, ծրագրված ցուցանիշը գերակատարել ենք 164.1մլն դրամով /104.9%/. Նախորդ տարվա համեմատ հավաքագրվել է 10.5%-ով կամ 331.8մլն դրամով ավել:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով շուրջ 1244.9մլն դրամ է հավաքագրվել, ինչը կազմել է պլանային ցուցանիշի 107.3%-ը՝ ավել 84.9մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշի՝ 111.1%-ը կամ ավել 124.0մլն դրամով:

Պետական տուրքի մասով պլանը կատարվել է 67.1%-ով:

Միաժամանակ, սակայն, պետք է նշեն, որ հարկային եկամուտները թերակատարվել են շահութահարկի, հաստատագրված և բնապահպանական, բնօգտագործման վճարների մասով՝ 13.0մլն դրամ ընդհանուր գումարով:

- Հատկապես ո՞ր միջոցառումների իրականացումը նպաստեց նման ցուցանիշների ապահովմանը:

- Ռիսկային ոլորտների հարկ վճարողների հետ իրականացվել են բացառական աշխատանքներ՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունքների ճիշտ և ամբողջ ծավալով հայտարարագրման նպատակով:

Անպարտաճանաչ և պարբերաբար պարտավորություններ կուտակող հարկ վճարողների նկատմամբ կիրառ-



վել են հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկադրանքի եղանակներ. հարկ վճարողների գույքի վրա դրվել է 154 արգելադրում, դատարան է ներկայացվել 15 հայց և այլն:

Տարվա ընթացքում տեսչության կողմից իրականացվել է 170 ստուգում, այդ թվում՝ բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունների հաշվարկման և վճարման ճշտության 114 ստուգում է կատարվել:

Իրականացված ստուգումների արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 73.4մլն դրամ պարտավորություններ, պետբյուջե է մուտքագրվել 69.1մլն դրամ կամ լրացուցիչ հաշվարկվածի 94.1 տոկոսը:

- Պարոն Դուլիսանյան, նախանշված բարեփոխումներն արդյունավետ իրականացնելու համար պետք է որ կադրային մեծ ներուժ

Հարկային եկամուտների պլանները գերակատարվել են հետևյալ եկամտատեսակներով՝

■ ԱԱՀ-ի մասով՝ 8.7%-ով, ավել 67.1մլն դրամով. նախորդ տարվա նկատմամբ գերակատարումը 20.3 % է կամ 142.0մլն դրամ:

■ Ակցիզային հարկի մասով՝ 3 անգամ ավելի:

■ Եկամտահարկի մասով՝ 8.8%-ով, ավել 33.9մլն դրամով, նախորդ տարվա նկատմամբ՝ 14.2%-ով և 52.3մլն դրամով:

■ Առևտրի հարկի մասով՝ 4.8%-ով, ավել 22.4մլն դրամով, նախորդ տարվա նկատմամբ՝ 15.1%-ով և 64.8մլն դրամով:

■ Ավտոճանապարհային մասհանումների մասով՝ 8.5%-ով, նախորդ տարվա նկատմամբ՝ 19.2%-ով:

■ Այլ հարկային եկամուտների մասով՝ 8.6%-ով, իսկ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներով՝ 0.3%-ով:

լինի: Ձեր տեսչությունում այդ խնդիրը լուծված է:

- Անցած տարի տեսչությունում կադրային փոփոխություններ են կատարվել: Մրցույթի արդյունքում 5 նոր աշխատակից է ընդունվել աշխատանքի: Միանշանակ ասեմ, որ մեր հարկային ծառայողները պատասխանատվությամբ են մոտենում իրենց առջև դրված խնդիրներին: Իհարկե, արհեստավարժության առումով դեռևս անելիք կա. փորձի փոխանակման, աշխատանքային ունակությունների կատարելագործման անհրաժեշտություն կա: Այդ նպատակով կենտրոնական ապարատում պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են անցկացվում: Այս առումով էական է մեր համակարգի ղեկավարի վարած կադրային քաղաքականությունը, ինչի արդյունքում առաջին տեղում է թիմային աշխատանքը և միասնական նպատակի հասնելու ձգտումը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

Այսուհետ Ղարաբաղի հարկատուն իրավունք ունի հարկ եղած դեպքում դիմել հարկային մարմիններն և օրենսդրության կիրառման վերաբերյալ ստանալ անհրաժեշտ պարզաբանումներ. դա արդեն ամրագրված է օրենքի մակարդակով:

Ծի բարձրացնել հարկ վճարողների կողմից պետության նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության արդյունավետությունը: Օրենսդրորեն կարգավորվում են նաև հարկերի հաշվանցման և վերադարձման հարաբերությունները:

■ ղարաբաղյան աղբյուրներից ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժինները կհարկվեն 3% դրույքաչափով՝ անկախ ոչ ռեզիդենտների ռեզիդենտության երկրներում շահաբաժինների հարկման կամ չհարկման հանգամանքից, որով կբացառվի ԼՂՀ պետական բյուջեի մուտքերի կախվածությունն այլ երկրների ներքին օրենսդրության փոփոխություններից

■ վերանայվել և այլ հարկերի հաշվարկների ներկայացման ու վճարման ժամկետների հետ միասնականացվել են հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարվող եկամտից պահվող շահութահարկի հաշվարկի ներկայացման և վճարման ժամկետները

■ շահութահարկի 5% դրույքաչափով հարկվող գործունեությունների մասով հարկային վնասն ավել ցույց տալու համար նախատեսված 20% տուգանքի չափը նվազեցվել է՝ սահմանելով 10%, ինչը կհաշվեկշռվի շահութահարկի գործող դրույքաչափի հետ:

Համաձայն «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխության՝ հարկ վճարողներին



«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքում կատարված այս փոփոխության արդյունքում հարկ վճարողներն ավելի հստակ պատկերացում կունենան հարկային պարտավորությունների վերաբերյալ, նաև հարկերի վճարման մակարդակը կբարձրանա:

Օրենքի մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է հարկ վճարողների կատարած գործարքների կամ գործառնությունների վերաբերյալ երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և անուղղակի եղանակներով հարկերի առաջադրման համակարգ, ինչի արդյունքում կընդլայնվի հարկային մարմնի տեղեկատվական բազան, հետևաբար նաև՝ դրա օգտագործման շրջանակները: Դա էլ իր հերթին հնարավորություն կստեղծի

Փոփոխություններ են կատարվել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում:

Այդպիսով՝

■ նորմավորվել են հովանավորչական ծախսերը

■ համախառն եկամտի բացակայության դեպքում կատարված ծախսերը կճանաչվեն նաև հարկման տեսանկյունից: Մինչ օրենքի փոփոխությունը համախառն եկամտի բացակայության պայմաններում կազմակերպության կողմից կատարված ծախսերը հաշվի չէին առնվում՝ թեկուզև այդ ծախսերն արդարացված են, մասնավորապես՝ վարչական և ֆինանսական

Վարսավիրանցներում, բացի վարսավիրական ծառայություններից, այլ ծառայությունների մատուցման մասով ևս սահմանվել են հաստատագրված վճարներ:

իրավունք է վերապահվում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների վերաբերյալ ներկայացնել ճշտված



տեղեկություններ՝ չկիրառելով 5000 դրամ տուգանքը, ինչն իր հերթին կբարձրացնի հաշվետվական կարգապահությունը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՅ օրենքում



նավորված՝ սահմանվել են նաև հարկային արտոնություններ, մասնավորապես, գյուղատնտեսության ոլորտում ԱԱՀ-ի գծով արտոնությունը երկարաձգվել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, դիզելային վառելիքի օտարումն էլ ազատվել է ԱԱՀ-ից:

«Հաստատագրված վճարների մասին» օրենքի փոփոխությամբ հաստատագրված վճարով հարկման դաշտից ընդհանուր հարկման դաշտ է տեղափոխել բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի, առևտրի իրականացման վայրի կազմակերպման, տեսաժապավենների և տեսամագնիստոֆոնների վարձույթի գործունեությունը:

Ուժը կորցրած է ճանաչվել **«Բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարների մասին» օրենքը:** Մասնավորապես, այս տարվա հունվարի 1-ից բենզինի և դիզելային վառելիքի վաճառքի գործունեությունը կհարկվի ընդհանուր հարկ-



ված փոփոխությունները հիմնականում ուղղված են ԼՂՅ և ՀՀ հարկային դաշտի ներդաշնակեցմանը: Մասնավորապես, ՀՀ մաքսային սահմանով ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հարկերի հաշվարկմանը վերաբերող դրույթները համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը:

Սահմանվել են հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, ապրանքների ներմուծման հայտարարագրերի պահպանման ժամկետներ:

Ոչ առևտրային կոոպերատիվների լուծարման ժամանակ մնացորդային գույքի բաշխումը կհարկվի ԱԱՀ-ով, որով կբացառվեն ոչ առևտրային կոոպերատիվ ստեղծելու միջոցով ԱԱՀ-ից անհարկի խուսափելու հնարավորությունները:

Գործունեության առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմա-

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՅ օրենքով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից բացառվել են գինեկուրծը և խաղողի գինեկուրծից ստացված կոնյակի սպիրտը:

ման կարգով. արդյունքում հարկման այլընտրանքային համակարգերից անցում կկատարվի դեպի հարկման առավել արդարացի՝ արժեքային համակարգի:





րում գործող հանրային սննդի օբյեկտներից գանձվող վճարի չափին:

Բացօթյա վայրերի համար ապրիլ-հոկտեմբեր ամիսների համար սահ-

Կիսամյակային հաշվարկ-հաշվետվություններ կայացնող անհատ ձեռնարկատերերին իրավունք է վերապահվել սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունները ևս ներկայացնել կիսամյակային կտրվածքով, որի արդյունքում, փաստորեն, վերջիններիս շփումները հարկային մարմնի հետ կհասցվեն նվազագույնի:

մանված լրացուցիչ 1.2 գործակցի կիրառման ժամկետ է սահմանվել մայիս-սեպտեմբերը՝ ապրիլ և հոկտեմբեր ամիսներին հաճախորդների սակավաթվությամբ պայմանավորված:

Ավտոտրասնապորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնողների կողմից ստացված գազի ծավալների թերհայտարարգրման դեպքում կկիրառվի տուգանք՝ դրա հետևանքով չվճարված հաստատագրված վճարի 50%-ի չափով:

«Հաստատագրված վճարների մասին» օրենքի փոփոխությամբ հաստատագրված վճարով հարկման դաշտից ընդհանուր հարկման դաշտ է տեղափոխվել բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի, առևտրի իրականացման վայրի կազմակերպման, տեսաժապավենների և տեսամագնիսոֆոնների վարձույթի գործունեությունը:

Վարսավիրանոցներում, բացի վարսավիրական ծառայություններից, այլ ծառայությունների մատուցման մասով ևս սահմանվել են հաստատագրված վճարներ: Մինչ փոփոխությունը նշված ծառայությունները հարկվում էին ընդհանուր կարգով, ինչն էլ դժվարություններ էր ստեղծում հարկ վճարողների կողմից հարկերի հաշվարկման և հաշվառման վարման համար:

Կիսամյակային հաշվարկ-հաշվետվություններ կայացնող անհատ ձեռնարկատերերին իրավունք է վերապահվել սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունները ևս ներկայացնել կիսամյակային կտրվածքով, որի արդյունքում, փաստորեն, վերջիններիս շփում-

ները հարկային մարմնի հետ կհասցվեն նվազագույնի:

Մարտակերտի և Հադրութի շրջաններում գործող հանրային սննդի օբյեկտների համար գանձվող հաստատագրված վճարի չափը հավասարեցվել է Ասկերանի և Մարտունու շրջաններ-





«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» և «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» օրենքներում կատարված փոփոխություններով բացառվել է ապահովագրիների և մասհանումներ կատարողների կողմից սոցիալական վճարների և մասհանումների պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող հաշվարկների, հաշվետվությունների ներկայացումն այն հաշվետու ժամանակաշրջանի համար, որից անցել է 3 տարի:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների, մասհանումների հաշ-

Հարկատուն իրավունք ունի հարկ եղած դեպքում դիմել հարկային մարմիններն և օրենսդրության կիրառման վերաբերյալ ստանալ անհրաժեշտ պարզաբանումներ. դա արդեն ամրագրված է օրենքի մակարդակով:

վանցման և վերադարձման հարաբերությունները սահմանվել են օրենքով:

«ԼՂՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի փոփոխությամբ հնարավորություն է ընձեռնվել «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետով նախատեսված հայտարարության փակցման և դրանում պահանջվող տեղեկությունների ներառման ստուգումների, ինչպես նաև չափագրումներ անցկացնելու հանձնարարագրեր տալու իրավասությունը հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխանցել նաև հարկային տեսչության պետերին: Արդյունքում կապահովվի հարկային տես-



չությունների կողմից գործնականում ծագած խնդիրների առնչությամբ արագ արձագանքման հնարավորությունը և կբարձրանա ընթացիկ հարկային հսկողության կարևորագույն գործիքի՝ չափագրման կիրառման արդյունավետությունը:

Օրենսդրորեն կարգավորվել են նաև հարկային և այլ պարտադիր վճարների հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման ուսումնասիրությունների անցկացման և հսկիչ գնումների իրականացման կարգերը:

Սահմանվել են նաև ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտի ուժի մեջ մտնելու ժամկետները:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» օրենքի փոփոխությամբ փոքր ձեռնարկատիրության մի շարք ոլորտներում, մասնավորապես կոշիկի, կենցաղային իրերի և անձնական օգտագործման այլ իրերի նորոգման, համակարգչային խաղերի կազմակերպման, մեկ աշխատատեղով վարսավիրական ծառայությունների մատուցման, մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման ծառայություն-

ների մատուցման և այլ ոլորտներում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» օրենքի փոփոխությամբ գործունեության կասեցման ընթացքում կապարակնիքները վնասելու և կասեցման օբյեկտ մուտք գործելու դեպքում կիրառվող տուգանքների տասը տոկոս մասհանումները կուղղվեն հարկային համակարգի զարգացման ֆոնդի կազմավորմանը: 



21

մլրդ 505մլն դրամ.
2010-ի հենց տարեսկզբից և ամեն ամիս հայտարարվում էր՝ Արցախի հարկայինը գերակատարում է: Վերջնական արդյունքը կանխատեսելի էր. տարին ևս ամփոփվեց գերակատարումներով՝ հարկային եկամուտների, տուրքերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով հարկային մարմինները ծրագրվածից 2.8%-ով ավել գումար են փոխանցել պետական գանձարան: Դրամական առումով դա 585մլն է, ինչը մեր Արցախի բյուջեի համար փոքր գումար չէ: Հատկապես որ նախորդ տարվա համեմատությամբ գերակատարումը 11.4% է կազմում կամ 2մլրդ 196մլն դրամ:



«Նույն տեսլանքով առաջ ենք գնալու՝ զուգահեռ լուծում տալով 2010-ի բոլոր թերացումներին»,-

ԼՂՀ ԿԱ ՀԴԾ պետ Արտակ Բալայանի վճռականությունն է:



-Պարոն Բալայան, 2010-ն ամփոփված է ու, ինչպես և ակնկալվում էր՝ գերակատարումներով: Ձեր վերլուծություններով և դիտարկմամբ, հիմնականում ո՞ր միջոցառումների արդյունքում է հարկային մարմինն հաջողվել ապահովել նման ցուցանիշ:

-Այո, նախորդ տարիների համեմատ հարկային հավաքագրումների առումով զգալի աճ է արձանագրվել, ինչը ես

-ճիշտ եք, միանշանակ հսկողական աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ և իրականացմամբ է նաև մեծապես պայմանավորվում հարկերի հավաքագրման արդյունավետությունը: Այստեղ պետք է առանձնացնեմ կամերալ ուսումնասիրությունները, որոնք գործարկում ենք 2009թ. հուլիսի 1-ից և տեղերում՝ անմիջական հարկ վճարողների մոտ, իրականացվող ստուգումները:

արդյունավետ դարձնելու նպատակով. վերադաս մարմնում ձևավորված աշխատանքային խմբերի միջոցով տեղերում պարբերաբար իրականացվում էին ուսումնասիրություններ, քննարկվում դրանց անցկացման ճշտությունը, վերհանվում թերությունները, որոնց հիման վրա էլ այս տարի ընթացակարգն ավելի կհստակեցվի, աշխատանքներ կտարվեն օգտագործվող տեղեկատվության

ՕՐԵՆՍՈՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԻ 20 10-Ի ՄՈԴԵԼԸ

մի շարք գործոններով եմ պայմանավորում: Մուտքերի ապահովման այս տեմպը 2008-ից սկսած միջոցառումների շարունակական իրագործման ու ընդլայնման արդյունք է: Մասնավորապես, 2010 թվականին մենք շարունակեցինք աշխատանքները հարկային վարչարարությանը վերաբերող օրենսդրական դրույթների կատարելագործման, հարկային հսկողության, հանրային իրազեկման, հարկային մարմնի արդիականացման ուղղությամբ: Հիմնական այդ չորս ուղղություններով լայնածավալ աշխատանքներ ենք իրականացրել, որոնց արդյունքում էլ հնարավոր դարձավ ապահովել եկամուտների առավելագույն աճ:

-Հարկային համակարգի արդյունավետության մասին խոսելիս՝ թերևս պետք է ընդգծենք հսկողական աշխատանքները: Այս առումով ի՞նչ աշխատանք է կատարվել տարվա ընթացքում:

Անցած տարի կամերալ ուսումնասիրության են ենթարկվել շուրջ 6600 հաշվարկ-հաշվետվություններ, ինչը ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների 50%-ն է: Մեր ուսումնասիրությունների արդյունքում մոտ 1000 հարկ վճարողների առաջարկվել է կատարել ճշտումներ: Ընդ որում, հիմնականում բոլոր հարկ վճարողների կողմից ներկայացվել են ճշտված հաշվարկ-հաշվետվություններ՝ այդպիսով գերծ մնալով հետաժայում ստուգումներով պատժամիջոցների կիրառումից: Կարևորելով կամերալ ուսումնասիրության դերը՝ որպես առանձին հսկողական գործիք և ռիսկային ստուգումների իրականացման չափանիշ, դրան զուգահեռ տարվա ընթացքում պարբերաբար աշխատանքներ էին տարվում գործընթացն ավելի

շրջանակի ընդլայնման, համադրումների ավտոմատացման ուղղություններով, որոնք հնարավորություն կտան կամերալ ուսումնասիրության ենթարկել ավել

Առանձնակի կցանկանայի շեշտել այն հանգամանքը, որ առաջին անգամ դատարանի կողմից հարկերի վճարումից խուսափելու համար տնտեսվարողը դատապարտվել է ազատազրկման. դա լուրջ ահազանգ է հարկերից միտումնավոր խուսափող այլ տնտեսվարողների համար:

լի մեծ թվով հարկ վճարողների հաշվարկ-հաշվետվություններ՝ միաժամանակ վերհանելով ռիսկային հարկ վճարողներին:

Ինչ վերաբերում է տեղերում իրականացված ստուգումներին,





զանգ է հարկերից միտումնավոր խուսափող այլ տնտեսվարողների համար:

-Իսկ ի՞նչ չափանիշներով է կատարվում ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը:

- Յուրաքանչյուր ամսվա համար կազմվում է ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկը, որում վերջիններիս ընտրությունն իրականացնելիս, բացի վաղեմության ժամկետներից, հաշվի են առնվում որոշ ռիսկային գործո-

ման համակարգի վերջնական ձևավորման և ներդրման համար:

Պետք է նշեմ նաև, որ այս գործընթացում կարևոր դեր ունի վերադաս հարկային մարմնում կազմավորված Ստուգումների համակարգման և հարկային հաշվառման վարչությունը. այս ստորաբաժանման հիմնական խնդիրներն են՝ ստուգումների որակի ու արդյունավետության բարձրացումը, դրանց նկատմամբ անմիջական վերահսկողության իրականացումը:

-Որպես ստուգումների թեմայի շարունակություն՝ տարվա ընթացքում ի՞նչ պատկեր է արձանագրվել ՀՀ-ների շահագործման և, ընդհանրապես, փաստաթղթաշրջանառության ոլորտում:

- ՀՀ-ների շահագործման կանոնների պահպանումը եղել է մշտական հսկողության տակ. այդ ուղղությամբ 200-ից ավելի ստուգում է կատարվել, որոնց արդյունքում տուգանվել է 145 հարկ վճարող, իսկ 17 տնտեսվարողի գործունեություն կասեցվել է 5 օրով: Զանի որ դրանք ստվերի դեմ տարվող պայքարի արդյունավետ միջոց են հանդիսանում, ուստի այսուհետ ևս հետևողական բնույթ են կրելու:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել նաև տնտեսվարող սուբյեկտների միջև փաստաթղթավորման պահանջների պահպանման ուղղությամբ, ինչը մեր տեսադաշտում է դեռ 2008-ից:

Վերահսկողական աշխատանքներին զուգահեռ նախաձեռնեցինք նաև ստվերի չափերի կրճատմանն ուղղված


օրենսդրական բարեփոխումներ, որոնք միտված էին տնտեսությունում փաստաթղթաշրջանառության կանոնակարգմանը, կարգազանց հարկ վճարողներին կատմամբ խիստ պատասխանատվության միջոցների սահմանմանը: Մասնավորապես, 2009թ. հուլիսի

ապա տարվա ընթացքում շուրջ 900 ստուգում ենք իրականացրել, որոնց արդյունքում լրացուցիչ բյուջե է մուտքագրվել շուրջ 800 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 38%-ով: Ընդ որում, այդ գումարի 50%-ը կազմում են միայն 20 խոշոր հարկ վճարողների մոտ իրականացված ստուգումներից մուտքերը:

Եական աշխատանք ենք կատարել հարկային հանցագործությունների կանխման, հակախրախության գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկելու և պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ: Տարվա ընթացքում հարկային մարմնի քննչական ստորաբաժանման կողմից հարուցվել է 4 քրեական գործ, առանձնակի կցանկանայի շեշտել այն հանգամանքը, որ առաջին անգամ դատարանի կողմից հարկերի վճարումից խուսափելու համար տնտեսվարողը դատապարտվել է ազատազրկման. դա լուրջ ահա-

նք, ընտրվում են նաև արտահերթ ստուգման ենթակա հարկ վճարողները, որոնց ցանկը ձևավորվում է օպերատիվ տեղեկատվության՝ համակարգում գործող ռիսկային ոլորտներում իրականացվող հսկողական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի վերլուծությունների արդյունքների հիման վրա: Նշված աշխատանքները կարևորվում են, քանի որ անհրաժեշտ հիմք կհանդիսանան ռիսկային չափանիշներով ստու-

գումների իրականաց-



Անցած տարի կամերալ ուսումնասիրության են ենթարկվել շուրջ 6600 հաշվարկ-հաշվետվություններ, ինչը ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների 50%-ն է: Մեր ուսումնասիրությունների արդյունքում մոտ 1000 հարկ վճարողների առաջարկվել է կատարել ճշտումներ: Ընդ որում, հիմնականում բոլոր հարկ վճարողների կողմից ներկայացվել են ճշտված հաշվարկ-հաշվետվություններ՝ այդպիսով գերծմալով հետագայում ստուգումներով պատժամիջոցների կիրառումից:

ԳԵՐԱԿԱՏԱՐՎԱԾ Է



1-ից ապ-
րանքների
ստվեբալի
շրջանառությու-
նը կանխելու նպատա-
կով «Հարկերի մասին»
օրենքով նախատեսվեց տու-
գանք գործարքի ամբողջ արժեքի
20 տոկոսի չափով՝ ինչպես հաշվար-
կային փաստաթուղթ չտրամադրող,
այնպես էլ դրանք չպահանջող գործար-
քի կողմերի նկատմամբ՝ բարեխիղճ
տնտեսավարող սուբյեկտներին ազա-
տելով պատասխանատվությունից, եթե
վերջիններս հարկային մարմիններին
ներկայացնեն իրենց փաստաթուղթ
չտրամադրած մատակարարների վե-
րաբերյալ տեղեկություններ և որոնց
հավաստիությունը կհիմնավորվի:

Արդյունքում առանց փաստաթղթերի
իրականացվող գործարքներն էապես
կրճատվել են: Սակայն առևտրի
ոլորտում տնտեսավարողնե-
րի միջև իրականացվող
գործարքներում շարու-
նակում էին մեծ տեղ
զբաղեցնել առանց
փաստաթղթերի գոր-
ծարքները, որոնց կա-
նոնակարգման ուղ-
ղությամբ 2010-ին մի
շարք միջոցառումներ
ենք իրականացրել:

Մեր գործելաոճին հա-
մապատասխան՝ նախ նա-
խագգուշական, բացատրա-
կան, քարոզչական աշխատանքներ
իրականացվեցին, այդ թվում՝ հարկ
վճարողների հետ մի քանի անգամ
կազմակերպվեցին անհատական հան-
դիպումներ, զանգվածային լրատվա-
միջոցներով հնչեցվեցին կոչեր ու զգու-
շացումներ, որոնք, սակայն, դրական
լուրջ արդյունքներ չտվեցին, ինչն էլ
համատարած ստուգումների հիմք հան-
դիսացավ. միայն հոկտեմբեր-նոյեմբեր
ամիսներին Ստեփանակերտում շուրջ
50 տնտեսավարողի մոտ համատարած
ստուգումներ ենք իրականացրել, որոնց
արդյունքում գրեթե բոլորի մոտ հայտ-
նաբերել ենք փաստաթղթավորման

պահանջների խախտումներ: Չնայած
ձեռնարկված միջոցառումների արդ-
յունքում խնդիրը նկատելիորեն
բարելավվել է, այդուհան-
դերձ, անելիք դեռ շատ
կա, այնպես որ այս
տարի ևս դա

գործունեությ-
ան հիմնական
ուղղություններից է
լինելու:

**-Պարոն Բալայան, վերահսկո-
ղական աշխատանքների մասով
ձեռքբերումներին զուգահեռ, ի՞նչ խն-
դիրներ են ի հայտ եկել, որոնք այս տա-
րի կլինեն Ձեր տեսադաշտում:**

**Շուրջ 900 ստու-
գում ենք իրակա-
նացրել, որոնց արդյունքում
լրացուցիչ բյուջե է մուտքագրվել
շուրջ 800 մլն դրամ՝ նախորդ տա-
վա նույն ցուցանիշը գերազանցելով
38%-ով: Ընդ որում, այդ գումարի
50%-ը կազմում են միայն 20 խոշոր
հարկ վճարողների մոտ իրակա-
նացված ստուգումներից
մուտքերը:**

- Հսկողական աշխա-
տանքների բնագա-
վառում, իսկապես,
նաև խնդիրներ
կան. օրինակ,
որոշ դեպքե-
րում ստուգող
տե ս ու չ ն եր ն
օրենսդրության
պահանջները ոչ
ճիշտ էին կիրա-
ռում, ինչը պայմա-
նավորված էր նրանց
մասնագիտական ոչ բա-
վարար պատրաստվածությ-
յամբ, կամ էլ ստուգումները լիարժեք
չէին իրականացվում: Դա էլ պարտակա-
նությունների ոչ պատշաճ կատարմամբ
էր պայմանավորված, այդ թվում՝ անմի-
ջական ղեկավարների կողմից ստուգող
տեսուչի իրականացրած ստուգման ըն-
թացքի նկատմամբ ոչ բավարար հսկո-
ղության իրականացմամբ:

Նման թերացումները վերացնելու, բա-
ցերը շտկելու և ստուգումների որակը
բարձրացնելու նպատակով առաջ-
նահերթ մի շարք քայլեր ենք նախա-
տեսում: Մասնավորապես, կմշակվի
ստուգումների ձեռնարկ, որն ուղղված

կլինի օրենսդրության դրույթ-
ների միատեսակ կիրառմանը,
հարկային պարտավորություն-
ների ճիշտ հաշվարկման հար-
ցում հարկային ծառայողներին
օժանդակմանը, ստուգող տեսուչ-
ների հետ պարբերաբար կկազմա-
կերպվեն վերապատրաստման
դասընթացներ, ըստ կա-
տարված հսկողական աշ-
խատանքների կներդրվի
աշխատակիցների գնահատ-
ման համակարգ:

*Հարկային եկամուտների և պետա-
կան տուրքի մասով պետական
բյուջե է մուտքագրվել 15 մլրդ
418 մլն դրամ՝ պլանավորված ցու-
ցանիշը գերազանցելով 2%-ով,
իսկ նախորդ տարվա նույն ցուցա-
նիշը՝ 13.1%-ով կամ 1 մլրդ 786 մլն
դրամով:*

*Պարտադիր սոցիալական ապա-
հովության վճարների գծով հավա-
քագրվել է շուրջ 6 մլրդ 88 մլն դրամ՝
գերակատարելով պլանային առա-
ջադրանքը 288 մլն դրամով կամ
5%-ով, իսկ նախորդ տարվա նույն
ժամանակահատվածի ցուցանիշը՝
410 մլն դրամով կամ մոտ 7.2%-ով:*

*Նախորդ տարվա և պլանային
առաջադրանքների համեմատ աճ
է արձանագրվել հիմնականում բո-
լոր հարկատեսակների գծով:*

*Հարկ է նշել, որ բյուջեի եկամուտ-
ների կազմում էական դերակա-
տարում ունեցող առաջին 6 խոշոր
կազմակերպությունների ընդհա-
նուր մուտքերը, ի տարբերություն
վերջին տարիներին ցուցաբերած
նվազման միտումների, 2010 թվա-
կանին 2009-ի համեմատ աճել են
34%-ով:*

60.8 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՅՈՎԵԼ ԵՆ 100 ԽՈՇՈՐՆԵՐԸ



20 10թ.

ԼՂՀ 100 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարը կազմել է 13.1մլրդ դրամ: Դա կազմել է ԼՂՀ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր մուտքերի 60.8%-ը: Նկատենք, որ 2009թ. տարվա ընթացքում 100 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը կազմել էր շուրջ 10.8մլրդ դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 55.9%-ը:



«Բեյգ Մեթըլս» ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 2.8մլրդ և 4.1մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

Ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված՝ պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի մեծության՝ նկատվել է աճի միտում: Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2009թ. կազմել էր 11.8մլրդ, իսկ 2010թ.-ի նույն ժամանակահատվածում՝ 13.2մլրդ դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010թ.-ին՝ 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.3մլրդ դրամով կամ 21.1%-ով և կազմել է 13.1մլրդ դրամ:

100 խոշոր հարկատուների տարեկան վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 2009թ. և 2010թ. ունեցել է հետևյալ պատկերը. եթե 2009թ. այն կազմել է ընդհանուրի 55.9%-ը, ապա 2010թ.-ին՝ 60.8%-ը:

100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով 2010թ.-ին նկատվել է աճի միտում՝ նախորդ տարվա համեմատ: Աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2009-ին կազմել էր 8297 մարդ, 2010-ին՝ 8973 մարդ, իսկ աշխատանքի վարձատ-

րությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2009 և 2010թթ. տարվա կտրվածքով համապատասխանաբար կազմել է 10.2մլրդ և 12.2մլրդ դրամ: Միջին ամսական աշխատավարձը 2009թ. կազմել էր 102.3 հազար դրամ, իսկ 2010-ին՝ 114.2 հազար դրամ: Առաջին երեք խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2010-ին՝ 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 754.5մլն դրամով՝ կազմելով շուրջ 4.5մլրդ դրամ:

«ԲԵՅԶ ՄԵԹԵԼՍ»-Ն ԻՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ Ե՝ 100 ԽՈՇՈՐՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԱՐԸ

100 խոշորների ցանկը, ինչպես 2009-ին, այնպես էլ 2010-ի ողջ տարվա ընթացքում գլխավորել է «Բեյգ Մեթըլս» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 2.8մլրդ և 4.1մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ: Ինչպես նկատեցիք, թիվ մեկ հարկատուին որպես կանոն միշտ հաջողվում է բավականին լավ արդյունք

արձանագրել նախորդ տարիների համեմատ և անընդհատ առաջ գնալ:

Ինչ վերաբերում է առաջին եռյակին, ապա «Բեյգ Մեթըլս»-ին հաջորդում են Ղարաբաղի տնտեսության մյուս հսկաները՝ «Ղարաբաղ Տեկեկոմ»-ը և «Արցախգազ»-ը: Հիշեցնենք, որ այս նույն եռյակը 2009-ին էլ էր առաջատար, այսինքն՝ պահպանել է իր դիրքերը: Երեք խոշոր հարկ վճարողները 2009-ին պետբյուջե

էին փոխանցել 4.4մլրդ դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այսինքն՝ պետբյու-

յուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 22.6%-ն ապահովել են 3 խոշորները: 2010թ.-ի արդյունքներով այդ ցուցանիշն ավելի բարձր է՝ 6.3մլրդ դրամ կամ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական

«Բեյգ Մեթըլս»-ին հաջորդում են Ղարաբաղի տնտեսության մյուս հսկաները՝ «Ղարաբաղ Տեկեկոմ»-ը և «Արցախգազ»-ը:

տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 29.3%-ը:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԱՅՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ

2010-ին ըստ ծավալի 100 խոշոր հարկ վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է. եթե հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի) 2009թ. շուրջ 87.5մլրդ դրամ էր, ապա անցած տարի այն կազմել է 103.6մլրդ դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել՝ 16.1մլրդ դրամով կամ 18.4%-ով: ☑

Առաջին 100 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Դ/Դ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010 թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շա հույժահարկ. եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ. ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր. տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբոն	3559026.0	300716.3	2524105.7		734204.0
2.	90015278	«Ղարաբաղ Տեխնոլոժի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	1336689.8	164635.5	1129661.2		42393.1
3.	90010189	«Արցախագազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	539352.1	25177.9	487875.4		26298.8
4.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	526933.1	501130.7	6054.8		19747.6
5.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	390671.2	53056.2	326418.2		11196.8
6.	90071281	«Դորոժնիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	333116.6	82232.6	240059.0		10825.0
7.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	284948.8	56681.8	192367.8		35899.2
8.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	181560.4	33807.2	141332.7		6420.5
9.	90028183	«Հորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	170037.0	25146.0	139200.0		5691.0
10.	90026446	«Գլոբալ Շին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	166371.8	30479.9	131181.2		4710.7
11.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	133357.8	774.3	131400.0		1183.5
12.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	128562.3	30917.4	93463.1		4181.8
13.	90070057	«Արցախ Բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	104150.5	3070.1	97417.1		3663.3
14.	90025315	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	91798.1	80215.0			11583.1
15.	90012365	«Զարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	90496.9	21903.5	59342.5		9250.9
16.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	89685.2	2164.4	22826.3	7673.8	57020.7
17.	90024957	«Շինվեր պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	89356.7	4040.6	81998.9		3317.2
18.	90016787	«Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	81019.0	16271.7	61551.1		3196.2
19.	90213737	«Պրոմագրոսսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	78961.5	5607.3	71093.5		2260.7
20.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	76691.2	14834.7	58000.0		3856.5
21.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	75439.9	3256.0	115.0	67260.6	4808.3
22.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	66728.8	12799.1	49918.9		4010.8
23.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք. Ասկերան	66188.6	26701.6	31439.8		8047.2
24.	90003477	«Վերածնունդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	60203.2	14859.2	42423.9		2920.1
25.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	57855.6	2598.6			55257.0
26.	90026928	«Տեխնոտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	54692.3	10083.7	42975.3		1633.3
27.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	50875.0	872.2	48972.9		1029.9
28.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	47049.9	6806.0	39347.4		896.5
29.	90018697	«Միկենա Էստերպայզիս ԼԼԿ Արցախ կարի-կոչիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	46608.2	33624.4	5786.6		7197.2
30.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	43824.3	6006.6	35158.6		2659.1
31.	90001705	«Օկեն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	41199.5	1392.4			39807.1
32.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	40987.0	750.8			40236.2
33.	90281903	«Պարզ» ՍՊԸ	ք. Հաղորդ	40266.7	1194.1	14722.1		24350.5
34.	90025073	«Ամուր տանիք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	40138.0	5945.0	33515.0		678.0
35.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	38549.3	332.8		666.8	37549.7
36.	90020698	«ԱՏԲ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	37937.5	7727.2	29090.0		1120.3
37.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ. Տոլ	37516.0	5200.6	30270.2		2045.2
38.	90009361	«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	36982.3	10022.8	25197.9		1761.6
39.	90019529	«Ջի սթայլ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	35318.4	8162.3	24812.9		2343.2
40.	90020535	«Աշոտ երկաթ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	34488.5	10524.1	17998.9	2801.1	3164.4
41.	90022299	«Հրայր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	34100.0	100.0			34000.0
42.	90022248	«Բուրգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	33770.4	9774.8	23023.5		972.1
43.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	33503.5	20356.3			13147.2
44.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	33443.9	8496.2	101.6	21264.6	3581.5
45.	90018654	«Ֆլեշ-պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	33003.1	2084.3	48.0	26229.2	4641.6
46.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	32923.9	8689.4	23272.8		961.7
47.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ. Բերքաձոր	32255.3	6517.1	24069.6		1668.6
48.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	32081.4	6513.5	22407.0		3160.9
49.	90006038	«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	31243.1	6885.2	17751.6		6606.3
50.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	30424.0	6368.6	23431.8		623.6



Առաջին 100 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Յ/Յ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010 թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շա հույժահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
51.	90212476	«Ստարտ պլուս» ՍՊԸ	գ.Սարգսաշեն	29948.3	6661.1	15300.0	1442.6	6544.6
52.	90073399	«Նարվա» ՓԲԸ	ք.Ասկերան	29672.2	1771.7	121.2	26812.6	966.7
53.	90026704	«Վերանորոգման շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	28974.3	4274.8	24213.8		485.7
54.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	28708.5	17155.5	10713.5		839.5
55.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ.Իվանյան	28661.5	1128.4	940.7	24199.5	2392.9
56.	90013333	«Արցախյան շինարարություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	27889.3	24670.0	326.8		2892.5
57.	90001138	«Սեխտրանսպորտ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	27569.7	4129.7	21990.2		1449.8
58.	90018886	«Գևատ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	27289.1	339.0			26950.1
59.	90003099	«ՏՏՏ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	27120.2	1871.6			25248.6
60.	90015089	«Էրուդիտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	26189.5	4769.5	21000.0		420.0
61.	90013187	«Ծանշիկներանորոգում» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	25411.8	6968.4	16477.0		1966.4
62.	90020724	«Հիմք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	25314.3	2773.9	21729.5		810.9
63.	90016752	«Ծանշիկ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	24452.6	12789.9	9341.4		2321.3
64.	90012064	«Բարի հոգի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	24430.3	1387.4			23042.9
65.	90014541	«Դիզալ պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	23037.2	5118.2	16348.9		1570.1
66.	90072843	«Օլիմպ-1» ՍՊԸ	ք.Ասկերան	22710.1	3124.7	18841.2		744.2
67.	90018955	Ստեփանակերտի «Ազրոսերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	22522.7	4510.2	17491.5		521.0
68.	90026025	«Երեքունկ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	22517.0	150.8			22366.2
69.	90001559	«Նորայր եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	22480.3	1561.6			20918.7
70.	90018406	«Աստապ» ՍՊԸ	ք. Զարվաճառ	22356.1	3314.2	16191.6		2850.3
71.	90017411	«Կարին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	22193.7	3197.1	15474.2		3522.4
72.	90017582	«Մերկուրի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	22076.1	1962.9			20113.2
73.	90015123	Ավ.Թախթաշյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	21900.6	2815.1	18880.6		204.9
74.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	21591.4	4822.7	14054.7		2714.0
75.	90024467	«ԱԻՄ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	21312.5	3964.9	16251.2		1096.4
76.	90024699	«Առանցք շին» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	21028.6	6232.9	4730.0		10065.7
77.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	20979.2	727.5		17500.0	2751.7
78.	90414369	Բաղդասարյան Արմեն ա/ձ	ք. Ստեփանակերտ	20527.2	688.1			19839.1
79.	90019476	«Տեխնոլոգիաներ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	20521.4	3130.8	16742.9		647.7
80.	90023576	«Փոր Դիրեկշն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	20335.1	10152.8		4206.0	5976.3
81.	90005352	«Էներգո» ԱԿ	ք. Ստեփանակերտ	20035.6	4764.5	14632.9	67.2	571.0
82.	90004685	«Շինհարթակ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	20022.2	3385.5	15953.0		683.7
83.	10003104	«Իմաստ» ՍՊԸ	ք.Բերձոր	19929.2	3309.4	15704.6		915.2
84.	90072886	«Ենգիբարյան» ՓԲԸ	գ. Բերջածոր	19666.8	2843.9	16546.4		276.5
85.	90001721	«Կիլիկիա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	18469.4	87.9	17206.4		1175.1
86.	90002836	«Էլեկտրոմոնոտաժ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	18458.6	1640.0	16000.0		818.6
87.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	18290.8	2291.7	15393.0		606.1
88.	90010884	«Էլիտա 1» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	17632.8	2207.6	14482.1		943.1
89.	90010207	«Զի-Էֆ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	17338.8	1160.9	15565.7		612.2
90.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	17193.9	1674.2	2004.9		13514.8
91.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	17186.1	6389.5	9004.7		1791.9
92.	90015784	«Սերպանտին» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	17161.1	4270.1	12351.9		539.1
93.	90014773	«Սիրիկա Արմենիա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	16853.2	15073.2			1780.0
94.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	16797.4	4183.1	12054.6		559.7
95.	90023765	«Սեար գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	16735.4	136.8			16598.6
96.	90004677	«Սիփան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	16301.7	5550.3	10549.4		202.0
97.	90070701	«Վոեժ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	16294.5	11311.8	3238.5		1744.2
98.	90026334	«Մեծ - Անիվ» ՍՊԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	16015.6	666.0	7870.0	340.0	7139.6
99.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մաս.	ք.Ստեփանակերտ	15952.3	1759.3	13433.0		760.0
100.	90017249	«Ալյուս գրուպ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	15452.4	4254.6	5166.2	5002.7	1028.9

«Եթե կոմերցիոն ընկերությունը շահույթ է ստանում հասարակության շնորհիվ, ապա պետք է նաև նպաստի այդ նույն հասարակության զարգացմանը», - «Ղարաբաղ Տելեկոմ»-ի գործելաոճն է հիշեցնում ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:



Արցախյան հեռահաղորդակցության ոլորտը չպետք է հետ մնա համաշխարհային զարգացումներից. ինչպես Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի խոշոր հարկատուների ցանկում առաջատար դիրքեր զբաղեցնող «Ղարաբաղ Տելեկոմ»-ի ղեկավարության վճռականությունն է: Գործունեության սկզբնական շրջանից առ այսօր

ընկերության հմուտ քաղաքականության արդյունքում հաջողվում է իրագործել գլխավոր նպատակներից մեկը՝ Արցախ բերել լավագույնը՝ սպառողներին առաջարկելով նորարարական մոտեցումներ: «Ղարաբաղ Տելեկոմ»-ը ձևովորեց և հետևողականորեն կայացնում է նաև Նոր մշակույթ՝ Կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը:



- Պարոն Յիրիկյան, մինչ հայաստանյան շուկա մուտք գործելը, Ձեր ընկերությունն արդեն բավականին հայտնի էր Արցախում՝ «Ղարաբաղ Տելեկոմ» անվամբ: Ինչպե՞ս սկիզբ դրվեց Ձեր բիզնեսին Արցախում:

- Մեր ընկերությունն արցախյան հեռահաղորդակցության ոլորտ մուտք գործեց 2002թ.-ից: Չնայած տվյալ տարածաշրջանում առկա բոլոր մարտահրավերներին և բարձր ռիսկային գործոններին, մենք մեր առջև նպատակ դրեցինք՝ Արցախի բնակչությանը տրամադրել բարձրորակ կապ և նպաստել կենսակերպի բարելավմանը: Մենք վստահ էինք և հավատում էինք, որ կարող ենք դրան հասնել:

Այսպիսով, գործունեության հենց սկզբից «Ղարաբաղ Տելեկոմ»-ի ղեկավարությունը հաստատակամ էր՝ Արցախում կիրառել տեխնոլոգիական բարձր ստանդարտներ, որպեսզի բնակչությանն ապահովենք հուսալի և մատչելի ծառայություններով: Այսօր տեխնոլո-

քը, որ այսօր հանրապետության տարածքի 95 տոկոսը, և Ստեփանակերտի ու արվարձանների գրեթե 100 տոկոսն ապահովված է բջջային կապով: Բայց մենք, այդուհանդերձ, չենք սահմանափակվում միայն այդքանով՝ ձգտելով հասնել ավելի լին և կատարելագործելով մատուցվող ծառայությունները: Այսօր մենք հպարտ ենք Արցախ աշխարհին բազմաթիվ՝ GSM, PSTN, ինտերնետ և ձայնային ծառայություններ առաջարկելու համար:

- Պարոն Յիրիկյան, նշեցիք, որ այս տարածաշրջանում ռիսկային գործոնները բարձր են: Ձեր փորձն ի՞նչ է ցույց տալիս. հե՞շտ է բիզնես դնել և կայանալ ԼՂՀ-ում: Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս եք գնահատում ներդրումային կլիման Արցախում:

- Ներդրումների մասին կարող եմ ընդհանրացված խոսել. անկախ գտնվելու

ունի: Նպատակներն իրականացնելու համար պահանջվում է միայն միջավայրի յուրահատկությունների խորը ուսումնասիրություն:

Մենք հավատում ենք մշակույթով և պատմությամբ հարուստ Արցախի զարգացմանը և հպարտ ենք, որ այդ գործին մենք էլ ենք մաս կազմում:

Այսօր հանրապետության տարածքի 95 տոկոսը, և Ստեփանակերտի ու արվարձանների գրեթե 100 տոկոսն ապահովված է բջջային կապով:

- Այսինքն՝ Ձեր գործընկերներին՝ խոշոր բիզնեսի ներկայացուցիչներին, խորհուրդ կտա՞ք խոշոր ներդրումներ կատարել Արցախում:

- Այս հարցում «Ղարաբաղ Տելեկոմ»-ի հաջողություններն ավելի խոսուն են: Երբ մենք Արցախում նախաձեռնեցինք

ՀԱՍՆԵԼ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ՝ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐՈՎ

գիական զարգացումներն անմիջական ազդեցություն ունեն մեր առօրյայի վրա, և «Ղարաբաղ Տելեկոմ»-ը զարգացումներին համընթաց դրական առաջընթաց է խոստանում Արցախի բնակչությանը:

- Ի՞նչ ճանապարհ է անցել Ձեր ընկերությունն այս տարիներին և ի՞նչ ցուցանիշներ են արձանագրվում արդեն այսօր:

- Մեր հաջողությունների մասին առաջին հերթին խոսում է այն հանգաման-

վայրից՝ յուրաքանչյուր մարդ ստիպված է որոշակի խոչընդոտներ և դժվարություններ հաղթահարել: Ինչպես և մյուս երկրները, Լեռնային Ղարաբաղի Յան-րապետությունը ևս, բնականաբար, ունի հնարավորություններ, որոնք պատրաստ է զարգացնել և իրագործել: Ուղղակի անհրաժեշտ է ունենալ ամուր կամք և նպատակին հասնելու պատրաստակամություն: Սոցիալ-տնտեսական զարգացման սկզբնական փուլում գտնվող մյուս երկրների նման, ԼՂՀ-ն աճելու և զարգանալու մեծ ներուժ

այս գործը, գիտակցում էինք, որ հաղորդակցման ամուր և ապահով հիմք ստեղծելը կնպաստի այլ ներդրողների և ձեռներեցների՝ Ղարաբաղում բիզնես սկսելու որոշման կայացմանը: Մենք հավատում ենք մշակույթով և պատմությամբ հարուստ Արցախի զարգացմանը և հպարտ ենք, որ այդ գործին մենք էլ ենք մաս կազմում:

- «Ղարաբաղ Տելեկոմ»-ը ԼՂՀ խոշոր հարկ վճարողների ցանկում, որպես կա-



պես գործարար, ինչպե՞ս կգնահատեք հարկային դաշտի ազդեցությունը բիզնեսի վրա:

ՀԱՃԱՆՈՐԴ

Հաճախորդը մեր ուշադրության կենտրոնում է, մեր գործունեության և ջանքերի շարժիչ ուժը:

ՈՐԱՎ

Որակ այն ամենում, ինչ արվում է մեր կողմից:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Բաց լինել յուրաքանչյուր գործում

ԱՐԴՅՈՒՆՔ

Ստանձնել և իրագործել

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք անտարբեր չենք. մեր գործունեությունը մեզ պարտավորեցնում է պատասխանատու լինել հասարակության առջև:

- Այս հարցում ևս մեր ձևակերպումը հստակ է՝ գործել օրենքին համապատասխան: Մեր գործունեության հիմքում թափանցիկ աշխատելաոճն է, և մենք առաջնահերթություն ենք տալիս բացառապես օրենքի շրջանակներում գործելուն, քանի որ այդ օրենքները մշակվում և շարունակաբար բարելավվում են կառավարության և օրենսդիր մարմնի կողմից՝ ի շահի ոչ միայն հեռահաղորդակցության ոլորտի, այլ և՛ տնտեսության բոլոր ոլորտների զարգացման:

- **Ձեր ընկերությունը հայտնի է նաև կորպորատիվ պատասխանատվության քաղաքականությամբ:** Արցախում ի՞նչ է արվել այս առումով և ապագայում ի՞նչ բարեգործական ծրագրեր եք նախատեսում այստեղ իրականացնել:

- «Ղարաբաղ Տելեկոմ»-ը վստահ է, որ կայուն հասարակությու-

յունը կայուն ազգի հիմքն է: Հետևաբար, եթե կոմերցիոն ընկերությունը շահույթ է ստանում հասարակության շնորհիվ, ապա պետք է նաև նպաստի այդ նույն հասարակության զարգացմանը: Մենք պարտավոր ենք հասարակության հետ կիսել մեր ներդրումներից ստացած բարիքները: Այս տարիների ընթացքում մենք զգալի ներդրումներ ենք կատարել մշակութային, առողջապահական և համայնքային զարգացման ոլորտներում: Կատարված ներդրումների չափն այս պահին հասնում է ավելի քան 2.4 միլիարդ դրամի: Այժմ, ԼՂՀ կառավարության հետ համատեղ, զբաղվելու ենք առավելապես առողջապահական ուղղվածության ծրագրերով: Առողջ մարդիկ առողջ ազգի գրավական են:



- **Ղարաբաղի ժողովուրդն ի՞նչ նոր ծրագրերի ականատեսը կլինի մոտ ապագայում:** Առհասարակ, զարգացման ի՞նչ ծրագրեր ունեք Արցախում:

- Որպես հեռահաղորդակցության ոլորտի ընկերություն, մենք ձգտում ենք բարձրացնել ընկերության մրցունակությունը: Հզորացնում և զարգացնում ենք ցանցը, առաջարկելով նորարարական ծառայություններ և ապրանքներ վերանայված գնային քաղաքականությամբ: Չուզահեռ, որպես հասարակության մաս, մենք կշարունակենք աջակցել բնակչությանը՝ ներդրումներ կատարելով տարբեր բնագավառներում: 

Այս տարիների ընթացքում մենք զգալի ներդրումներ ենք կատարել մշակութային, առողջապահական և համայնքային զարգացման ոլորտներում: Կատարված ներդրումների չափն այս պահին հասնում է ավելի քան 2.4 միլիարդ դրամի:



«Նվաճելիք բարձրունքները միասին»



Զարգացույն նվերը Զեր մարտիրոսներին

«Արցախբանկ» ՓԲԸ
ԼՂՀ 375000, ք. Ստեփանակերտ
Կոտայնյանցիների 25
Հեռ.՝ (+374 47) 943412
Ֆաքս՝ (+374 47) 971542

«Հաճախորդների օրեցօր աճող թվաքանակը, քաղաքացիների կողմից ներդրվող ավանդների ծավալները վկայում են ԼՂՀ-ում մասնաճյուղի աճող վարկանիշի մասին», - արձանագրում է «Ամերիաբանկ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղի կառավարիչ Գրիգոր Կադարյանը

AMERIABANK

- «Ամերիաբանկ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղը ԼՂՀ-ում գործում է 2008 թվականից: Պարոն Կադարյան, կարող ենք փաստել, որ այս կարճ ժամանակահատվածում բանկը հասցրել է տարածաշրջանում վստահության արժանանալ:

- Մասնաճյուղն ի սկզբանե շատ հաջող ընդգրկվեց դարաբաղյան ֆինանսական շուկայում և այսօր արդեն էական առաջընթաց է արձանագրվել: Դա առաջին հերթին պայմանավորված է բանկի ռազմավարությամբ և որդեգրած քաղաքականությամբ: Որպես ֆինանսական կառույց՝ բանկն ուղղորդվում է ինչպես ավանդական

Մեկնարկ,

առաջնորդություն և հաղթական ավարտ

«Ամերիաբանկ»-ի տարբերանշանը խորհրդանշում է նոր անվան՝ «Ամերիա»-ի սկզբնատառն ու վերջնատառը: Այն մի կողմից խորհրդանշում է մեկնարկ և տրամաբանական ու հաղթական ավարտ, մյուս կողմից կրում է առաջնորդության և նպատակաուղղվածության գաղափարը՝ որպես վեր ուղղված սլաք:

լավագույն փորձի, այնպես էլ՝ ժամանակակից կառավարման առաջադեմ մեթոդների օպտիմալ համադրմամբ: Մենք մշտապես հանդես ենք գալիս նորարարությամբ՝ համալրելով առաջարկվող ծառայությունների տեսականին և կատարելագործելով սպասարկման որակը: Մենք հանդես ենք գալիս պարզապես բանկային ծառայությունների վաճառքով, այլ բացահայտում ենք յուրաքանչյուր հաճախորդի կարիքները և դրան համապատասխան առաջարկում նախընտրելի բանկա-

BRENDAN BRACKEN-Ի ԱՐՁԱՆԻԿԸ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»-ԻՆ

20 10

թվականի լավագույն բանկը «Ամերիաբանկ»-ն է: Թե ի՞նչ չափանիշներ է հաշվի առել «Financial Times» հեղինակավոր կազմակերպության «The banker» ամսագիրը՝ բանկի գործունեությունը գնահատելիս, հայտնի է՝ զարգացման, շահույթի աճի տեմպերից մինչև մատուցվող ծառայությունների տեսականին, «Կասկադ» բանկի հետ բարեհաջող միացումն ու առաջադիմական մոտեցումները: Թվարկումներն, իհարկե, այսպիսով չեն սահմանափակվում, որոնց շնորհիվ «Ամերիաբանկ»-ն արժանացել է պատվաբեր հավաստագրին ու Brendan Bracken-ի արձանիկին:





յին ծառայություն, ինչը նպաստում է հաճախորդի գործունեության զարգացմանն ու առաջընթացին: Առաջարկում ենք նաև բավականին մրցունակ և ճկուն սակագնային փաթեթ: Նման սպասարկման արդյունքն է, որ Հայաստանի 100 խոշոր հարկատուներից 39-ը համագործակցում են «Ամերիաբանկ»-ի հետ:

Եվ այստեղ, Ստեփանակերտում ևս, մասնաճյուղն առաջարկում է «Ամերիաբանկ»-ի ծառայությունների ամբողջ փաթեթը: Հաճախորդների օրեցօր աճող թվաքանակը, քաղաքացիների կողմից ներդրվող ավանդների ծավալները վկայում են ԼՂՀ-ում մասնաճյուղի աճող վարկանիշի մասին:

- Ինչպիսի՞ վարկային պորտֆել ունի մասնաճյուղը բիզնեսի և բնակչության համար:

- Մասնաճյուղն առաջարկում է վարկերի լայն տեսականի՝ սկսած ոսկու գրավով մինչև խոշոր բիզնեսի համար նախատեսված վարկերը: Արցախի բնակչությանը, այսինքն՝ անհատ քաղաքացիներին, առաջարկում ենք սպառողական և

նպատակային վարկեր՝ ընտանեկան միջոցառումների իրականացման համար. այդ վարկերը ծննդյան, կնույնի, հարսանիքների և այլ արարողությունների համար են: Ունենք նաև ուսման, արձակուրդի կազմակերպման, ավտոմեքենա և բնակարան գնելու կամ բնակարանը վերանորոգելու վարկեր: «Ամերիաբանկ»-ը, որպես կորպորատիվ, ներդրումային բանկ, առաջարկում է ՓՄՁ-ների և խոշոր ընկերությունների բիզնեսի վարկավորման ընդարձակ փաթեթ բիզնեսի ցանկացած ոլորտի համար: Ներկայումս մեր վարկառուների ցանկում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում գործող մի շարք կազմակերպություններ: Ուզում եմ ընդգծել բանկի մոտեցումը վարկավորման հարցում. «Ամերիաբանկ»-ը մշտական աշխատանք է իրականացնում պոտենցիալ վարկառուների հնարավորությունների ճիշտ գնահատման և արդեն առկա վարկառուների հետ համակողմանի համագործակցության ուղղությամբ: Դրանով են պայմանավորված «առողջ» վարկային

պորտֆել ունենալու «Ամերիաբանկ»-ի առաջատար դիրքերը Հայաստանի ֆինանսական շուկայում:

- «Ամերիաբանկ»-ի կողմից արցախցիների առաջարկվող ավանդների տեսականին լա՞յն է:

Վերելք, առաջընթաց ու նորարարություն

«Ամերիաբանկ»-ի տարբերանշանը խորհրդանշում է Հայաստանն իր վեր ուղղված լեռնագագաթներով: Այսպիսով, Ամերիան մարմնավորում է որպես նորանոր բարձունքների, անվերջ վերելքի ու առաջընթացի ձգտող կառույց:

- Չնայած այն հանգամանքին, որ «Ամերիա»-ն կորպորատիվ, ներդրումային բանկ է, այնուհանդերձ մեծ ուշադրություն է ցուցաբերում ֆիզիկական անձանց համար նախատեսված ծառայությունների փաթեթի տեսականու ընդլայնմանը և ծառայությունների տրամադրման պայմանների շարունակական բարելավմանը: Այս առումով բավականին ընդարձակ է մեր կողմից առաջարկվող ավանդների տեսականին. մենք առաջարկում ենք 8 տեսակի ավանդ, որոնք ընտրության մեծ հնարավորություն են ընձեռում: Օրինակ,

Բանկի Խորհրդի նախագահ Ռուբեն Վարդանյանն արցախցիներին քաջաձևորթ բարերար Լևոն Հայրապետյանի նախաձեռնած արցախյան Մեծ հարսանիքի 750 գույգերից 250-ի քավորությունն է ստանձնել:

«Կառուցվածքային» ավանդը Հայաստանում և Արցախում ավանդատուին առաջին անգամ հնարավորություն ընձեռեց դուրս գալ միջազգային ֆինանսական շուկա և գումար վաստակել նավթի, ոսկու, Դոու-Ջոնսի ինդեքսի և այլ ակտիվների գների փոփոխությունից՝ առանց ներդրված գումարները կորցնելու ռիսկի և դեռ ավելին՝ ստանալ 2 մասից բաղկացած եկամուտ, որի առաջին մասը ստացվում է ավանդական բանկային ավանդի ներդրումից՝



Իրականում Արցախյան Մեծ հարսանիքի 250 զույգերի հովանավորը ոչ թե «Ամերիաբանկ»-ն է, այլ բանկի Խորհրդի Նախագահ Ռուբեն Վարդանյանը: Զույգերի առաջին երեխաներն արժանացել են 2000 դոլարի, երկրորդ երեխաները՝ 3000 դոլարի չափով դրամական պարգևի:

Ֆիքսված տոկոսադրույքով, իսկ երկրորդ մասը ձևավորվում է միջազգային շուկաներում՝ թվարկված ակտիվների գների փոփոխությունից:

- Բանկն արցախյան Մեծ հարսանիքի 250 զույգերի հովանավորություն էր ստանձնել և պարբերաբար անակնկալներ է մատուցում նորաստեղծ ընտանիքներին: Այդ գործընթացը շարունակակա՞ն է լինելու:

- Իրականում Արցախյան Մեծ հարսանիքի 250 զույգերի հովանավորը ոչ թե «Ամերիաբանկ»-ն է, այլ բանկի Խորհրդի Նախագահ Ռուբեն Վարդանյանը: Նա մեր արցախցիներին քաջածանոթ բարերար Լևոն Հայրապետյանի Նախածեռած արցախյան Մեծ հարսանիքի 750 զույգերից 250-ի քավորությունն է ստանձնել: Հարսանեկան նվերներից հետո շարունակվում է քավորի կողմից նվերների մատուցումն այդ զույգերի երեխաներին, ընդ որում, զույգերի առաջին երեխաներն արժանացել են 2000 դոլարի, երկրորդ երեխաները՝ 3000 դո-

լարի չափով դրամական պարգևի: Եվ այս գործընթացը լինելու է շարունակական, յուրաքանչյուր նոր ծնվող երեխա

«Երազանքի թիմ»

միավորված մեկ կազմակերպության շրջանակներում

Կանաչ գույնով առանձնացված է «Ամերիա»-ի թիմը, որի անդամները՝ փոխլրացնելով միմյանց, մշտապես ձգտում են կատարելագործման նոր բարձունքների:

արժանանալու է դրամական պարգևի իր քավորի կողմից: «Ամերիաբանկ»-ն այս գործընթացում շատ համեստ դեր է կատարում: Մենք կազմակերպում ենք զույգերի հետ հանդիպումները, նվերների հանձնման միջոցառումները, իրա-

կանացնում ենք նրանց բանկային սպասարկումը:

- Պարոն Կադարյան, ի՞նչ նոր քայլեր եք մտադիր ձեռնարկել առաջիկայում: Արցախցիները կարո՞ղ են նոր ծառայությունների մատուցում ակնկալել:

- «Ամերիաբանկ»-ը, հավատարիմ մնալով իր քաղաքականությանը, շարունակելու է հանդես գալ նորարարությամբ. անշուշտ, ընդլայնվելու է մատուցվող ծառայությունների շրջանակը, այնպես որ, մեր հաճախորդներին սպասվում են նոր անակնկալներ:

- «Financial Times»-ի հեղինակավոր «The Banker» ամսագրի կողմից «Ամերիաբանկ»-ն արժանացել է Հայաստանի 2010թ. «Տարվա լավագույն բանկ» մրցանակին: Ի՞նչ չափանիշներով է գնահատվել բանկը՝ Հայաստանում լավագույնը ճանաչվելու համար:

- Մրցույթի մասնակիցները «Ամերիաբանկ»-ը ճանաչել են 2010թ. լավագույն բանկ Հայաստանում՝ հաշվի առնելով մի շարք կարևոր չափանիշներ. բանկի զարգացման տեմպերը, մատուցվող ծառայությունների լայն տեսականին՝ սկսած սպառողական վարկերից մինչև ձեռքբերումների և միաձուլումների /M&A/ ծառայությունը, ակտիվների, շահույթի աճի տեմպերը, միջազգային կառույցներից 85մլն դոլարի չափով գումարների ներգրավումը և բարեհաջող տեղաբաշխումը, չաշխատող ակտիվների նվազագույն չափը, ինչը ճկուն ռիսկային համակարգի կիրառման արդյունք է, «Կասկադ» բանկի հետ բարեհաջող միացման գործընթացը, նորարարությունը, բանկային գործում ցուցաբերվող առաջադիմական մոտեցումները: 📌

Լինելով «Ամերիա» ֆինանսախորհրդատվական ընկերությունների մաս և օգտվելով «Տրոյկա Դիալոգ» ընկերության միջազգային հսկայական փորձից և բարձրակարգ տեխնոլոգիական հնարավորություններից՝ «Ամերիաբանկ»-ը ստանձնել է նորարարական, բազմակողմանի և բարձրորակ ֆինանսական լուծումներ տրամադրող գործընկերոջ դերը հայաստանյան շուկայում և տարածաշրջանում գործունեություն իրականացնող հաճախորդների համար:

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Ապրիլ

I	II	III	IV	V	VI	VII
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԱՐՑԱԽՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԳԵՐԵԼ Է ՌՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ԱՐԱՔՆԵՐԻՆ



«Շատերն են ուզում մեր արտադրանքը տեսնել իրենց շուկաներում, քանի որ ԱՎԵԼԻ ԲՆԱԿԱՆ ՉԻ ԼԻՆՈՒՄ»

Գործարար Մելսոն Սարգսյանի համոզմունքն է

Եզակի հայ ձեռնարկատերերից, ով ի սկզբանե նպատակ է դրել ունենալ...փոքր ձեռնարկություն: Մելսոն Սարգսյանի նպատակի իրագործման ուղին սկսվել է միջազգային դասընթացներից. այսօր անհատ ձեռնարկատիրոջ ձեռքում է Եվրամիության տրամադրած որակավորման սերտիֆիկատը, որը նրան տրամադրվել է նոր տեխնոլոգիաների և նորագույն տեխնիկայի ներդրման, փորձի փոխանակման 40-օրյա ուսումնագործնական դասընթացների արդյունքում: Եվ ոչ միայն դա. Մելսոն Սարգսյանը հնարավորություն է ունե-

ցել Հունաստանում ծանոթանալ ընտանեկան փոքր ձեռնարկությունների գործունեությանը, և այդտեղ էլ կայացվել է վերջնական որոշում՝ ունենալ հենց այդպիսի ձեռնարկություն: Կարճ ժամանակ անց՝ 2003-ին, Արցախում լսում են փոքր, բայց և հեռանկարային ներուժ ունեցող նոր ձեռնարկության մասին, որտեղ առ այսօր արտադրվում են սպառողներին հայտնի տակառի գինիներ և արցախյան վայրի հատապտուղների բնական հյութեր: Իհարկե, ձեռնարկության կայացմանն աջակցել է Արցախի ներդրումային հիմնադրամը:

- Պարոն Սարգսյան, այսօր շուկայում բավականին հայտնի է Ձեր արտադրանքը՝ տակառի գինիները, արցախյան հատապտուղների բնական ըմպելիքների տեսականին: Արտադրական պրոցեսում ի՞նչ տեխնոլոգիաներ եք կիրառում:

- Գինին արտադրում ենք խնդողի տեսակի բարձր որակի խաղողից: Ստացման և պահպանման ժամանակ այն չի մշակվում օրգանական և անօրգանական նյութերով, պատրաստվում է առանց կոնսերվանտների: Մեր գինին պահպանվում և հնեցվում է կաղնու տակառներում:

Իսկ բնական ըմպելիքները պատրաստվում են Արցախում աճող վայրի հատապտուղներից՝ հոնից, մոշից և մասուրից: Նշեմ, որ բնական ըմպելիքների արտադրման ժամանակ չեն օգտագործվում կոնսերվանտներ, կայունացնող նյութեր, հակախմորիչներ և այլ քիմիական նյութեր:

- Իսկ շուկայում առկա մրցակցային դաշտն ինչպե՞ս է անդրադառնում Ձեր գործունեության վրա:

- Մրցակցությունը, միանշանակ, խոչընդոտ չի հանդիսանում մեր բիզնեսի համար, քանի որ ձեռնարկությունում արտադրվում է բացառապես բնական հումքից և որակյալ արտադրանք: Ավելին՝ մրցակցությունը ստիպում է ավելի խիստ ուշադրություն դարձնել արտադրանքի որակին, դիզայնին, նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրմանը: Այսինքն՝ մշտապես ձգտում ենք ունենալ մրցակցությանը դիմակա-



2010-ի նոյեմբերին Սիրիայում տեղի է ունեցել Հայկական արտադրողների ցուցահանդես: Այստեղ մեր արտադրանքը մեծ գնահատականի է արժանացել, ստացել ենք նաև սերտիֆիկատ: Արդյունքում մենք ձեռք ենք բերել գործընկերներ, որոնց հետ համագործակցում ենք, նրանց աջակցությամբ մեր արտադրանքի արտահանման շուկաները կընդլայնվեն:



յող արտադրանք, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս ընդլայնել և զարգացնել բիզնեսը:

- Իսկ որո՞նք են իրացման շուկաները: Արցախից դուրս Ձեր արտադրանքը ներկայացվո՞ւմ է:

- Մեր արտադրանքը հիմնականում սպառվում է ԼՂՀ-ում և Հայաստանում: Այսօր դեռևս մեր արտադրանքի քանակը սահմանափակ է, հետևաբար այլ երկրներ արտահանելու մասին առայժմ խոսք չի կարող: Արդեն ունենք առաջարկներ Ռուսաստանից, ինչին կանդիդատանք արտադրանքի ծավալներն ընդլայնելու դեպքում, քանի որ մեզ համար առաջնային նպատակ է՝ ավելացնել և՛ տեսականին, և՛ ծավալները:

- Որպես փոքր բիզնեսի ներկայացուցիչ՝ ինչպե՞ս եք գնահատում արցախյան հարկային դաշտը:

- Գործունեության կազմակերպման օրվանից առ այսօր հարկային խոչընդոտ-

ների չեմ հանդիպել: Կարևոր է, որ ոլորտի զարգացման համար սահմանվել են հարկային արտոնություններ. խոսքը տեղական հումքից բնական հյութերի արտադրությունը ԱԱՀ-ից ազատելու մասին է: Իսկ վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների արդյունքում զգալիորեն կանոնակարգվել է նաև փաստաթղթաշրջանառությունը, ինչը նախկինում խնդիրներ էր առաջացնում:

Եթե տնտեսվարողը գործում է օրենքի շրջանակներում, ապա հարկերի վճարումը նրա համար որևէ խոչընդոտ չի կարող լինել:

- Վերջերս Դուք մասնակցել եք Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատի և Հալեպի առևտրական պալատի կազմակերպած ցուցահանդեսին: Կարո՞ղ եք արձա-

նագրել, որ Ձեր բիզնեսին զարգացման լուրջ հեռանկար է սպասվում:

- Մենք մասնակցել ենք տարբեր ցուցահանդեսների՝ «Արմենիա Էքսպո» 2005, 2006, 2009, 2010, ինչպես նաև 2010թ. նոյեմբերին՝ Սիրիայում տեղի ունեցած Հայկական արտադրողների ցուցահանդեսին: Այստեղ մեր արտադրանքը մեծ

գնահատականի է ար-

ժանացել, ստացել ենք նաև սերտիֆիկատ: Արդյունքում մենք ձեռք ենք բերել գործընկերներ, որոնց հետ համագործակցում ենք, նրանց աջակցությամբ մեր արտադրանքի արտահանման շուկաները կընդլայնվեն: ☑

Վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների արդյունքում զգալիորեն կանոնակարգվել է նաև փաստաթղթաշրջանառությունը:

Եթե տնտեսվարողը գործում է օրենքի շրջանակներում, ապա հարկերի վճարումը նրա համար որևէ խոչընդոտ չի կարող լինել:



Բարձր մթերատվություն, տոհմային լավագույն հատկանիշներ և, իհարկե, մաքրացել ու կայուն ժառանգականություն ապահովող. տոհմային կենդանիները պարտադիր այս պահանջներին պետք է համապատասխանեն, եթե ցանկանում են իրենց «կյանքը շարունակել» դարաբաղյան յուրահատուկ բնակլիմայական միջավայրում: Եթե այդ չափորոշիչները կան, մնացածը մասնագետների գործն է, ովքեր հաշվարկել են՝ տնտեսական տեսանկյունից տոհմային կենդանիներն ավելի ձեռնտու են. նախ կերն է ավելի քիչ ծախսվում, արդյունքն էլ դժգոհելու տեղիք չի տալիս՝ կես տոննա կշռող կովը օրական միջինը 20 լիտր կաթ է տալիս:

ՇՎԻՑ, ՖԼԵԳԿԻ, ԶԵՐՍԵՅ

«ԱԶՆՎԱԿԱՆ» ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՎԵՐՆ՝ «ՏՈՅՄԱՅԻՆ ԿԱՅԱՆ»-ՈՒՄ



Ուզո՞ւմ եք ակնկալած արդյունքը ստանալ՝ մեզ պահեք կերակրելու և խնամքի բոլոր կանոններին համապատասխան


Բարձր մթերատվությամբ և լավագույն ցուցանիշներով աչքի ընկնող երինջների խմբաքանակները՝ մեկը մյուսի հետևից «Ժամանում են» Արցախ. նրանց տեր ու տիրակալն այստեղ «Տոհմային կայան»-ն է: Այստեղ հոգում են, որպեսզի երինջները լիարժեք դրսևորվելու հնարավորություն ունենան, չե՞ որ գենետիկական մեծ ներուժով են օժտված, ավելին՝ յուրաքանչյուր ցեղ իր առանձնահատկությունն ունի:

Բայց «ազնվական» ծագում ունեցող կովերն էլ միամիտ չեն. ինքնադրսևորվելու դիմաց նրանք էլ իրենց պահանջներն են ներկայացնում: Առաջին և գլխավոր պահանջը՝ պայմաններն են. կենդանիների ժառանգականությունն, իհարկե, կարևոր է, բայց դա միայն նախապայման է: Հետևաբար փորձառու մասնագետը կովերի հայացքում ամեն օր կարդում է՝ ուզո՞ւմ եք ակնկալած արդյունքը ստանալ՝ մեզ պահեք կերակրելու և խնամքի բոլոր կանոններին համապատասխան: Բարձր մթերատվությամբ և վերարտադրողական բացառիկ հատկանիշներով օժտված կենդանի պահելը հասարակ գործ չէ... Իսկ այն հանգամանքը, որ երինջներն արտասահմանից են «Ժամանել», պատասխանատուներին ստիպում է նրանց նկատմամբ ընդգծված ուշադրություն ցուցաբերել՝ հատկապես սկզբնական շրջանում, մինչև կենդանիները կհարմարվեն նոր միջավայրին ու կլիմային: Այ-

նիս, արդեն տեղում ծնվածներին այդ սթրեսը չի սպառնում և նրանք ավելի մեծ ակտիվություն են ցուցաբերում:

Տոհմակայանում սա, բնականաբար, գիտակցում են և այս ուղղությամբ լուրջ աշխատանք կատարում. այլ կերպ հնարավոր չէ: Ընկերության ղեկավարը՝ Գրիգորի Կասպարյանը, արդեն իսկ վերանորոգված երկու անասնաշենքերն է մատնանշում: Իսկ շատ շուտով ևս 170 գլուխ կով կտեղափոխվի նորակառույց «բնակավայր»: Բայց դա էլ վերջը չէ. նոր մասնաշենքին կից լինելու է նաև կթարան, որը հագեցած է լինելու... համակարգիչներով, պատկերացնո՞ւմ եք... Ընդ որում, անասնաշենքի ոչ միայն նախագիծն է գերմանական, այլ նաև՝ սարքավորումները, որոնք տրամադրել է «Դելավի» ընկերությունը:

«Տոհմային կայան»-ի տնօրենը չի բացառում նոր խմբաքանակի ներմուծումը: Դա՛ որ հեռու ապագայում... 



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Մայիս

I	II	III	IV	V	VI	VII
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23 30	24 31	25	26	27	28	29

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am



Խ. ՊՈՂՈՍՅԱՆ. «Հետևում ենք նորամուծություններին և լավագույնը բերում Արցախ»

«ԱՐՑԱՔԱԿԱԹ»-Ը ՏԵՂՈՒՄ ՉԻ ԴՈՓՈՒՄ

Ավագ սերնդի ներկայացուցիչները կհիշեն, թե խորհրդային տարիներին ինչ վարկանիշ ուներ Ստեփանակերտի կաթի գործարանը. կհիշեն ու կհաստատեն, որ այն իր հզորությամբ ու ներուժով լավագույնների ցանկում էր ամբողջ

«Բնության բարիքները՝ առողջ ընտանիքի գրավական». ընկերության կարգախոսն է, որով «Արցախկաթ»-ը ներկայանում է սպառողներին՝ մատուցելով արտադրանքի լայն տեսականի: Ավելին՝ առաջիկայում այն ընդլայնվելու է. «Մոտ ժամանակներս կարտադրվեն նաև պանրի նոր տեսակներ՝ Բրինձա, Չանախ, Լոռի, Եղեգնաձոր, ինչպես նաև՝ գյուղական կարագ», -տեղեկացնում է կազմակերպության ղեկավարը: Խաչատուր Պողոսյանն առանձնահատուկ է ընդգծում այն հանգամանքը, որ արտադրության համար իրենք օգտագործում են Մարտունիի, Մարտակերտի և Քաջաթաղի մթերման կետերի կաթը. այդտեղ հավաքվում է արցախ-

տարածաշրջանում: Այսօր Ղարաբաղում գործող «Արցախկաթ» ՓԲԸ-ն հենց այդ գործարանի բազայի վրա է ստեղծվել և դարձյալ լուրջ համբավ է վայելում՝ ընդգրկվելով արցախյան կաթնամթերք արտադրող առաջատար ընկերությունների շարքերում:

յան լեռնաշխարհի մարգագետիններից ստացված անարատ կաթ: «Միանշանակ կարող եմ ասել, որ «Արցախկաթ»-ն իր սպառողին մատուցում է Էկոլոգիապես մաքուր, անարատ հումքից պատրաստված կաթնամթերք»:

Սպառողը պետք է վերանայի իր դիրքորոշումը և առավելությունը տա տեղական արտադրանքին: Այս նպատակին հասնելու համար «Արցախկաթ»-ի ղեկավարությունը մի շարք աշխատանքներ

է կատարել, և այսօր գործարանն ունի բարձրորակ կաթնամթերք արտադրելու տեխնոլոգիական բոլոր հնարավորությունները: Արդյունքում արցախյան կաթնամթերքը ոչ միայն չի զիջում, այլև որոշ տեսականիով նույնիսկ գերազանցում է ներկրված արտադրանքը:

«Արցախկաթ»-ի արտադրանքն իրացվում է հիմնականում Ստեփանակերտում, Ղարաբաղի շրջկենտրոններում և Հայաստանի Սյունիքի մարզում: Ընկերության ղեկավարությունն, իհարկե, մտադիր է ընդլայնել նաև իրացման շուկաները՝ ընդգրկելով Հայաստանի մյուս մարզերը ևս և Արցախն ամբողջությամբ:

«Մենք ձգտում ենք մեր ներդրումն ունենալ գյուղացիական տնտեսությունների զարգացման գործում, քանի որ մթերման խնդիրը գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտներից է»:

2009-2010թթ.-ին կատարված ներդրումների և աշխատանքների արդյունքում ընկերության արտադրական հզորությունը մեծացել է. «Արցախկաթ»-ում օրական արդեն մինչև 30 տոննա կաթ է վերամշակվում: Այնպես որ, ընկերության ղեկավարության հաշվարկներով, առաջիկա 3-5 տարիների ընթացքում կաթի ընդունման գործընթացում քանակական սահմանափակում չի լինի: «Արցախկաթ»-ի հեռանկարային ծրագրերում նշված է. հզորացնել արտադրական գործունեությունը, որն անմիջական ազդեցություն կունենա Ղարաբաղի գյուղատնտեսության և անասնապահության զարգացման վրա: Իսկ մի քանի ամսից արդեն ընկերությունում նախատեսվում են շահագործման հանձնել պաղպաղակի արտադրամասը, որտեղ շուրջ 15 տեսակի պաղպաղակ կարտադրվի: Ծրագրվում է ընդհանուր առմամբ օրական արտադրել 1-1.5 տոննա պաղպաղակ: ☑

«Արցախկաթ»-ում օրական արդեն մինչև 30 տոննա կաթ է վերամշակվում:



ԹԵԺ ԳԻԾ

Վստահություն

Հրատապություն

Հետևողականություն

(+374 47) 948-620

«ԼՈՒՍԱԿԵՐՏ»-Ն

ԱՐՑԱԽԻ 48-ՐԴ ՀԱՐԿԱՏՈՒՆ Է

Շուրջ 8 տարի առաջ Արցախի թռչնաբուծության ոլորտում հայտնվեց նոր անվանում՝ «Լուսակերտ» ընկերություն: «Մարտունու թռչնաֆաբրիկա» պետական ձեռնարկության սեփականաշնորհման արդյունքում կազմավորված այս ընկերությունն իր գործունեությունը սկսեց բավականին վստահ քայլերով՝ միանգամից իր հետևից տանելով մշտական սպառողներին:

«Լուսակերտ»-ը շուկայում հայտնի է հատկապես «Բրոյլեր» տեսակի հավի մսի և այլ մթերքների արտադրությամբ: Ընկերության ղեկավար Բորիս Դոլուխանյանի տվյալներով, թռչնաֆաբրիկան գործունեությունը ծավալում է սեփական ինկուբատորներով, թռչնանոցները հագեցված են բելգիական արտադրության ժամանակակից սարքավորումներով, կա սպանդանոց, սառնարանային տնտեսություն, կերի պահեստներ և դրա պատրաստման արտադրամաս:



«Եթե սպառման շուկաներն ընդլայնվեն, ապա արտադրության ծավալները կհասցնենք տարեկան հազար տոննայի»,- հայտնում է «Լուսակերտ» ՍՊԸ տնօրեն Բորիս Դոլուխանյանը:

վարկել է՝ եթե թռչնանոցները գործեն ամբողջ հզորությամբ, ապա նման ծանրաբեռնվածության դեպքում հնարավոր կլինի արտադրել տարեկան մինչև 1000 տոննա միս և 100 տոննա ելթամթերք: Այնինչ այժմ օգտագործվում է եղած հզորությունների շուրջ 70 տոկոսը միայն, քանի որ արտադրանքի սպառման շուկաները սահմանափակ են: «Լուսակերտ»-ի արտադրանքի 25 տոկոսն իրացվում է Ղարաբաղում, իսկ գերակշիռ մասը՝ 75 տոկոսը՝ Հայաստանում:

Արցախյան միայն այս կազմակերպությունը 120 աշխատատեղի խնդիր է լուծում, իսկ երբ ինկուբատորն է գործում, աշխատանքի են անցնում նաև, այսպես կոչված, սեզոնային աշխատակիցները:

«Ցավոտ հարց է»,- թռչնաֆաբրիկայի ղեկավարն այսպես է արտահայտվում, երբ մրցակցության մասին է խոսում: «Այսօր արտասահմանյան երկրներից հավի բուծ է ներկրվում, որի գներն անհամեմատ ցածր են: Այդ պատճառով արտադրանքի որակի նկատմամբ մեր մոտեցումը շատ խիստ է. մեր արտադրանքն արտադրվում է Էկոլոգիապես մաքուր պայմաններում, աճը խթանող կերային ոչ մի հավելում

չի օգտագործվում: Ունենք մեկ առավելություն ևս. «Լուսակերտ»-ի արտադրանքն առևտրի կետեր է առաքվում թարմ վիճակում, ինչի շնորհիվ էլ կարողանում ենք ապահովել արտադրանքի լիարժեք իրացումը»:

Մեկ օրական ճուր հաճեցումն ընդհանուր առմամբ 37-45 օր է տևում:

Օգտագործվող կերի և դրա բաղադրամասերի գերակշիռ մասը հիմնականում ներմուծվում է, քանի որ Արցախում նման արտադրություն չի ծավալվում: Միաժամանակ Բորիս Դոլուխանյանն ընդգծում է, որ ԼՂՀ-ում արդեն սկսել է մշակվել եգիպտացորեն և առաջիկայում հնարավոր կլինի այն ձեռք բերել արդեն տեղում, ինչը, իհարկե, կխթանի նաև գյուղացիական տնտեսությունների զարգացմանը:

«Լուսակերտ»-ի տնօրենը հաշ-



Արտադրանքի որակի նկատմամբ մեր մոտեցումը շատ խիստ է. մեր արտադրանքն արտադրվում է Էկոլոգիապես մաքուր պայմաններում, աճը խթանող կերային ոչ մի հավելում չի օգտագործվում:

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Հունիս

I	II	III	IV	V	VI	VII
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

«ԿՅԱՆՔ»-Ը ՀԱՂՐՈՒԹՈՒՄ ԶԱՐԳԱՑԵԼ ԵՎ ԱՌԱՋ Է ԳՆՈՒՄ



«Ցանկանում եմ օգտակար լինել քո երկրին, ժողովրդին, ուրեմն ոչ միայն օգնություն ցուցաբերիր, այլև նաև գործ ձեռնարկիր այդտեղ, որ մարդիկ աշխատեն: Ամենամեծ օգնությունը դա է»: Հենց այս համոզմունքը հաղորդակցի երեք ընկերներին ստիպեց լուրջ մտորել և հասկանալ՝ այս պահին ի՞նչ է պետք իրենց ծննդավայրին: Ի՞նչ գործ սկսել, որն օգտակար կլինի ոչ միայն իրենց, այլև նաև գյուղի շատ ընտանիքների համար: Որոշումից կարճ ժամանակ անց շատ հաղորդակցիներ արդեն աշխատանքի էին շտապում:

«Արցախի բիզնես միջավայրը հնարավորություն է տալիս մտածել ոչ միայն մակարոնեղենի արտադրության ծավալների ընդլայնման, այլև նաև հացի արտադրության կազմակերպման մասին, այն էլ՝ նոր տեխնոլոգիաներով. Ղարաբաղյան շուկայում դա նորություն կլինի», - արձանագրում է «Կյանք» ՍՊԸ-ի ղեկավար Վիգեն Ավետիսյանը:

«Կյանք» ընկերությունը տասնյակ ընտանիքների փրկությունը դարձավ: «Ուսումնասիրելով շուկան՝ հասկացանք, որ մեր գյուղում կարող ենք մակարոնեղենի արտադրություն կազմակերպել, ինչը տեղացիներին էլ աշխատանքով կապահովի. դա Հաղորդի համար շատ կարևոր է, թեև շատ բարերարներ են օգնում մեր հայրենակիցներին», -

նշում է «Կյանք» ընկերության ղեկավար Վիգեն Ավետիսյանը: Թե Հայաստանում, թե ԼՂՀ-ում տեղական մակարոնեղենը պատրաստվում էր խորհրդային ժամանակաշրջանի տեխնոլոգիայով՝ որպես հումք օգտագործելով ցորենի ալյուրը: Գործունեության հենց սկզբից կազմակերպության ղեկավարությունը որոշել էր՝ իրենց արտադ-



րանքը պետք է մրցունակ լինի, հետևաբար որոշեցվեց կիրառել իտալական տեխնոլոգիա՝ արտադրությունում որպես հումք օգտագործելով արդեն մանրացված ցորենի ծավար:

Արցախյան մակարոնեղենի մասին լուրերը միանգամից հասել են նաև վրացիներին, ովքեր անմիջապես ցանկություն են հայտնել «Կյանք»-ի արտադրանքը տեսնել իրենց շուկայում: Այնպես որ, բացի Հայաստանից, լայն սպառման շուկա է նաև Վրաստանը:

«Քանի որ արտադրանքի որակը մեզ համար միշտ էլ առաջնային է եղել, որոշվեց բոլոր սարքավորումները ներմուծել Իտալիայից: Մակարոնեղենի արտադրությունում օգտագործվող հումքը բարձր կարգի ալյուր է, որը Հայաստանից ենք բերում, իսկ մանրածավարը՝ Իտալիայից: Կարելի է ասել, որ որակի տեսանկյունից մեր արտադրանքն իտալական մակարոնեղենից չի տարբերվում, իսկ ահա գինը իտալականի համեմատ ավելի մատչելի է»:

Այնպես որ, առաջատար տեխնոլոգիաների կիրառումը կատարյալ որակ է ապահովում: Դրան գումարվում է նաև մատչելի գինը, և այդ բոլորը միասին կազմակերպության ղեկավարությունն անվանում է «ընկերության հաջողության երաշխիք», ինչի շնորհիվ «Կյանք»-ի մակարոնեղենը տեղական շուկայում ունի իր հստակ տեղը:

Վերջին տարիներին իրականացվող հարկային վարչարարության զարգացումներն արցախյան գործարար աշխարհի համար նկատելի են: Դա արդեն իսկ նրանց հիմք է տալիս դրական արդյունքների մասին խոսել: Վիզեն Ավետիսյանը մատնանշում է հատկապես հարկ վճարողների սպասարկման, իրազեկման աշխատանքների բարելավումը, հարկ վճարողների համար հավասարության սկզբունքի ապահովումը, նաև համակարգի գործունեությունն է ավելի թափանցիկ դարձել:

«Կարծում եմ, հարկային համակարգի բարեփոխումներն ու վարչարարության բարելավման միջոցառումները ճիշտ ուղու վրա են և մեծապես նպաստում են տնտեսության զարգացմանը», - ընդգծում է «Կյանք»-ի ղեկավարը:

Այս ամենն ընկերությանը հնարավորություն է տալիս նոր ծրագրեր կազմել, մտածել ոչ միայն մակարոնեղենի արտադրության ծավալների ընդլայնման, այլ նաև հացի արտադրության կազմակերպման մասին, այն էլ՝ նոր տեխնոլոգիաներով: Ղարաբաղ-



Առաջատար տեխնոլոգիաների կիրառումը կատարյալ որակ է ապահովում: Դրան գումարվում է նաև մատչելի գինը, և այդ բոլորը միասին կազմակերպության ղեկավարությունն անվանում է «ընկերության հաջողության երաշխիք»:

յան շուկայում դա նորություն կլինի՝ թե տեխնոլոգիայի կիրառման, թե արտադրական գործընթացի կազմակերպման տեսանկյունից:

Վերջին տարիներին հիմնադիրների ժողովը որոշել է ներդրումներ կատարել նաև զբոսաշրջության ոլորտում: Ընկերությանը պատկանող Ջրաշխարհի տարածքում այժմ ընթանում է հյուրանոցի, ռեստորանային համալիրի շինարարություն, ինչը կավարտվի արդեն այս տարվա մայիսին: «Մեր այս նախաձեռնությունը նոր բիզնես միջավայր կստեղծի, հարևան գյուղի բնակիչները կընդգրկվեն տարբեր ծառայություններում: Էկո տուրիզմի կազմակերպման համար Տոդ և



Մեծ Թաղլար գյուղերի տեսարժան վայրերն ու պատմական հուշարձանները փայլուն առաջարկ կլինեն զբոսաշրջության շուկայում»:



ԹՎԱՅԻՆ ԶԱՐՏԵՋՆԵՐՆ ՈՒ ՍԵՆՍՈՐԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ «ԱՋ ԶԵՌՔԸ»



**- Պարոն Շահվերդյան,
Արցախում զբոսաշր-
ջությունը կառավարության
կողմից ճանաչվել է որպես գերակա
ճյուղ: Այս առումով ի՞նչ ձեռքբերումներ
ենք արձանագրել 2010 թվականին:**

- Զբոսաշրջությունը հայտարարելով գերակա ճյուղ՝ Արցախի ղեկավարությունն իր առջև հստակ նպատակներ է դնում և դրանց իրագործման արդյունքում մի շարք խնդիրների լուծումն ակնկալում. դա, իսկապես, Արցախի տնտեսական զարգացման գերակա ոլորտներից է: ԼՂՀ-ում զբոսաշրջության զարգացում նշանակում է՝ երկրի կայուն տնտեսական զարգացում, շրջակա միջավայրի, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանություն, սոցիալական այնպիսի կարևորագույն խնդրի լուծում, ինչ-

պիսին աշխատատեղերի ստեղծումն է: Արդյունքում, բնականաբար, կավելանա ֆինանսական միջոցների ներհոսքը հանրապետություն, կակտիվանա ԼՂՀ ինտեգրման գործընթացը միջազգային զբոսաշրջային շուկաներում:

Զբոսաշրջիկներին մեր երկրում գրավում են բնությունը, մաքուր օդն ու ջուրը, պատմամշակութային հուշարձանները և, առաջին հերթին, արցախցու հյուրասիրությունը:

Այս խնդիրների լուծման համար 2010-ին մի շարք աշխատանքներ են կատարվել: «Ճանաչիր քո երկիրը» զբոսաշրջային փաթեթների շրջանակներում շարունակվել են կազմակերպվել Հայաստանի բնակիչների զբոսաշրջային այցելություններն Արցախ:

Ղարաբաղի զբոսաշրջային ներուժին տեղում ծանոթացնելու և մեր երկիրը միջազգային շուկայում որպես զբոսաշրջավայր պատշաճ ներկայացնելու նպատակով ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվել են ճանաչողական այցեր Հայաստանից, ԱՄՆ-ից, Իրանից, Կանադայից և Ռուսաստանից ժամանած լրագրողների համար:

Շարունակել ենք զբոսաշրջային տարածքների բարեկարգման աշխատանքները: Մայիսին պաշտոնապես բացվեց «Տիգրանակերտի հնագիտական թանգարան»-ը: Վեց ամսվա ընթացքում 15 հազար զբոսաշրջիկ է այցելել Տիգրանակերտ:

2010 թվականի երկրորդ կիսամյակում Հունիի «KARABAKHInformation» զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը հարյուրավոր այցելուների է հյուրընկա-



«Ղարաբաղ այցելողներին միշտ էլ զարմացնելու ենք մեր նորամուծություններով. այս տարվանից Արցախը զբոսաշրջիկներին կդիմավորի տեղեկատվական նոր ուղեցույցներով», - հայտարարում է ԼՂՀ զբոսաշրջության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը

լել՝ նրանց տրամադրելով տեղեկություններ Լեռնային Ղարաբաղում գործող զբոսաշրջային ենթակառուցվածքների և այլ ծառայությունների վերաբերյալ: Համակարգչային ծրագրի միջոցով Ստեփանակերտի թվային քարտեզ ենք պատրաստել և այն գրառել էլեկտրոնային կրիչի վրա:

Մեր զբոսաշրջային ներուժի քարոզչության նպատակով՝ Արցախի զբոսաշրջային արդյունքն առանձին տաղավարով ներկայացվել է Միլանում և Լոնդոնում անցկացվող հեղինակավոր միջազգային ցուցահանդեսներում: Դրանք մեծ հետաքրքրություն են առաջացնում ոլորտի գործարարների և զբոսաշրջիկների շրջանում, հետևաբար լուրջ խթան են հանդիսանում ԼՂՀ այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի համար:

- Հատկապես ո՞ր երկրների զբոսաշրջիկներն են հետաքրքրված մեր Արցախով:

- 2010-ին միջազգային այցելությունների թիվը 2009-ի համեմատ 30 տոկոսով աճել:

Ընդ որում, այս դեպքում «Ճանաչիր քո երկիրը» զբոսաշրջային փաթեթների շրջանակներում կազմակերպված ՀՀ բնակիչների զբոսաշրջային այցելությունները չեն հաշվառվել:

Այնպես որ, կարող եմ նշել, որ, ընդհանուր առմամբ, զբոսաշրջային այցելությունների թիվը 2010-ին աճել է 40%-ով:

Արտաքին գործերի նախարարության և վիճակագրական տվյալները փաստում են, որ զբոսաշրջիկների մեծ մասը մեր երկիր է ժամանում ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իրանից, Ռուսաստանից և Կանադայից:

- Իսկ ի՞նչ է փաստում վիճակագրությունը. զբոսաշրջիկները ցանկություն ունենում են դարձյալ գալ Արցախ:

- Միանշանակ՝ այո: Ընդ որում, ոչ միայն ցանկանում են, այլ նաև անպայման այցելում են: Վիճակագրական տվյալները ևս դա հաստատում են:

- Ձեր դիտարկմամբ, Արցախում ի՞նչն է գրավում զբոսաշրջիկներին:

- Չբոսաշրջիկներին մեր երկրում գրավում են բնությունը, մաքուր օդն ու ջուրը, պատմամշակութային հուշարձանները և, առաջին հերթին, արցախցու հյուրասիրությունը:

- Պարոն Շահվերդյան, ռազմավարական ի՞նչ ծրագրեր է նախատեսվում մշակել՝ ոլորտն ավելի գրավիչ դարձնելու առումով:

- Այս տարվա ծրագրով մի շարք աշխատանքներ և միջոցառումներ են նախանշված, որոնց մի մասը կիրականացվի մասնավոր և հասարակական հատվածի ներգրավմամբ:



Նախատեսվում ենք Ստեփանակերտում բացել «KARABAKHInformation» զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն, իսկ Գանձասարում, Ծաղկաշատում և Տիգրանակերտում՝ սեզոնային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ: Ստեփանակերտի գլխավոր փողոցներում կտեղադրվեն տեղեկատվական կենտրոնի ճանապարհային ցուցանակներ, զբոսաշրջիկներին կդիմավորեն նաև սենսորային Էկրանով թվային տեղեկատվական տաղավարներ:

Չբոսաշրջային այցելությունների թիվը 2010-ին աճել է 40%-ով:



«Հասնելու ենք կատարելության և հյուրանոցային միջազգային չափանիշների. մենք ընտրել ենք շարունակական նորամուծությունների ուղին», - հայտարարում է «Ալյուս գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ռուդոլֆ Առաքելյանը



Արդեն Ստեփանակերտում եք, ուրեմն ուղևորվեք դեպի Վերածննդի հրապարակ: Հենց այդտեղ էլ կգտնեք այն, ինչի մասին ձեզ այդքան պատմել են Արցախում եղած ձեր ընկերները. հենց կենտրոնում՝ Ազգային ժողովի նորակառույց շենքի մոտ է այն հյուրանոցը, որտեղ ձեզ արդեն սպասում են: «Արմենիա» հյուրանոցը միանգամից կնկատեք անգամ հեռվից. այն գրավում է յուրահատուկ ճարտարապետական ոճով:

Յուրահատկությունները շարունակվում են նաև ներսում... Սա հարմարավետության և շքեղության կատարյալ համադրություն է: Իհարկե, գալ Արցախ և մնալ հյուրանոցի պատերի հետևում աններելի է, բայց սա այն դեպքերից է, երբ նախ կցանկանաք շրջայց կատարել այս երիտասարդ հյուրանոցի տարածքում:

Ընտրությունը մեծ է՝ մեկտեղանոցից մինչև լյուքս համարներ

և ապարտամենտ. ձեր տրամադրության տակ են 55 հարմարավետ սենյակներ, բնականաբար, ինտերնետով, արբանյակային հեռուստատեսությամբ և միջազգային հեռախոսագծով:

Գործարարներն ու պաշտոնյաները կարող են այստեղ շարունակել իրենց աշխատանքը, քննարկումներ կազմակերպել տարբեր ձևաչափերով. կոնֆերանսների ժամանակակից սրահն ու բիզնես կենտրոնն այդ հնարավորությունը ձեզ տալիս են:

Արցախ աշխարհից ստացած հաճելի տպավորություններն այդպիսով չեն ավարտվում. մեր հայկական երկրորդ պետության հրաշալիքներով հիանալուց հետո օրվա վերջում կարող եք լիցքաթափվել հյուրանոցի սաունայում կամ շոգեբաղնիքում, կամ էլ պարզապես ընկերների հետ վայելել արցախյան ըմպելիքները փաթիլ բարի մոգական միջավայրում:



ԲՈԼՈՐ ՃԱՆԱԴԱՐՅՆԵՐԸ ԲԵՐՈՒՄ ԵՆ «ԱՐՄԵՆԻԱ». ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ և ՇՔԵՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Պարոն Առաքելյան, «Արմենիա» հյուրանոցը թեև ընդամենը 3-4 տարվա պատմություն ունի, բայց հասցրել է գրավել հազարավոր զբոսաշրջիկների, բարձրաստիճան պաշտոնյաների, գործարարների: Ինչի՞ շնորհիվ է դա Ձեզ հաջողվել: Առհասարակ, ի՞նչ ծառայություններ են մատուցվում «Արմենիա» հյուրանոցում:

- Մեր կողմից հաճախորդներին մատուցվող ծառայությունների շրջանակը բավականին լայն է և ընդգրկուն. հարմարավետ սենյակներից բացի ունենք նորագույն տեխնոլոգիաներով հագեցած բիզնես կենտրոն, պրոֆեսիոնալ մարմնամարզական սարքավորումներով մարզադահլիճ, բիլիարդ ափսոսաբան, շոգեբաղնիք, լողավազան, լոբի բար: Մեծ արձագանքներ ունենք նաև մեր ռեստորանից. այդտեղ առաջարկվում է բազմազան ճաշացուցակ, որն արտացոլում է հայկական լավագույն ավանդույթները: Հայկական ճաշատեսակներից բացի, ճաշացուցակում ներառված են նաև իտալական և ֆրանսիական խոհանոցները:

Փաթիկ բար. ամառային տաք, արևոտ օրերին «Արմենիա»-ի բացօթյա ամառային սրճարանը պատրաստ է հյուրընկալել ձեզ: Այդտեղի փորձառու բարմենները կառաջարկեն ձեզ կոկտեյլների և ըմպելիքների լայն ընտրանի: Այդ ամենը զուգակցվում է հաճելի երաժշտության հետ՝ պարզապես թարմ ուժ և էներգիա:

. Իսկ որքանով է շահավետ Ղարաբաղում հյուրանոց ունենալը:

- Հյուրանոցային բիզնեսը ծառայության ոլորտի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է, որը շատ պետությունների տնտեսությանը հսկայական եկամուտներ է բերում: Սակայն, եթե զարգացած երկրներում հյուրանոցների զբաղվածության 50%-ից ավելին ապահովվում է տեղի բնակչության կողմից, ապա

Եթե զարգացած երկրներում հյուրանոցների զբաղվածության 50%-ից ավելին ապահովվում է տեղի բնակչության կողմից, ապա նույնը չենք կարող ասել մեր երկրի մասին. այստեղ այդ ցուցանիշը չնչին է:



Նույնը չենք կարող ասել մեր երկրի մասին. այստեղ այդ ցուցանիշը չնչին է: Այդ առումով Ղարաբաղում հյուրանոցների զբաղվածությունն առավելապես ապահովվում է այլ երկրներից ժամանած մեր հայրենակիցների այցերով:



- Ստացվում է, որ Արցախում, ավելի քան այլ պետություններում, հյուրանոցների գործունեությունը կախված է զբոսաշրջային բիզնեսից: Այս առումով 2010թ.-ին հաճախորդների աճ արձանագրել էք:

- Իհարկե, հյուրանոցի գործունեությունը կախված է տար-



բեր պետություններից Արցախ ժամանող զբոսաշրջիկների քանակից: Հաշվի առնելով Արցախ այցելող զբոսաշրջիկների թվի անընդհատ աճը՝ կարծում եմ, հյուրանոցային բիզնեսն այստեղ զարգացման մեծ ներուժ ունի: Ի դեպ, մեր հյուրանոցն անցած տարի ունեցել է բազմաթիվ հատուկ հյուրեր, ինչը շատ խրախուսելի է: 2010-ին կարողացել ենք ակնկալվող հասույթն ապահովել 100 տոկոսով. ծրագրով նախա-



տեսված էր վաճառքի ծավալի 10-15 տոկոսանոց աճ՝ 2009-ի համեմատ:

- Իսկ հյուրանոցային սպասարկման գները մատչելի՞ են:

- Հաշվի առնելով հյուրանոցի կարգավիճակը, սպասարկման բարձր մակարդակը, ինչպես նաև ծառայությունների բազմազանությունը, մեզ մոտ գործում են բավականին մատչելի գներ:



- Հյուրանոցային բիզնես ունենալը մշտապես նորամուծություններ է պահանջում: Այդ առումով ի՞նչ ծրագրեր ունեք:

Հաշվի առնելով Արցախ այցելող զբոսաշրջիկների թվի անընդհատ աճը՝ կարծում եմ, հյուրանոցային բիզնեսն այստեղ զարգացման մեծ ներուժ ունի:

- Հյուրանոցային բիզնեսը և հյուրանոցային արտադրանքի իրացումը պահանջում են մասնագիտական բարձր վարպետություն, օպերատիվ և ռազմավարական մենեջմենթ, մարդկային լավագույն հատկանիշներ և սպասարկող անձնակազմի բարձր պատրաստվածություն: Հյուրանոցի տնօրինությունը մեծ ջանքեր է գործադրում այս ուղղությամբ՝ ձգտելով հասնել կատարելության և հյուրանոցային միջազգային չափանիշների: ☑



TOP RATING

Ո՞ր քաղաքներում են հյուրանոցների գները համապատասխանում որակին

Փ արիզը վերջին տեղն է զբաղեցրել աշխարհի 20 քաղաքների ցանկում, որտեղ հյուրանոցային ծառայությունների որակը համապատասխանում է դրանց համար առաջարկվող գներին: Այս մասին ասվում է հյուրանոցային համարների ամրագրման՝ Hotel.Info օնլայն ծառայության կազմած հաշվետվությունում:

Ուսումնասիրվել են 3-4 աստղանի հյուրանոցների որակ-գին հարաբերակցության վերաբերյալ այցելուների կարծիքները՝ 0-10 բալանոց սանդղակով:

Ինտերնետ ռեսուրսի բազայում կա ավելի քան 210 հազար հյուրանոց:

Վարկանշային աղյուսակում առաջին տեղն է զբաղեցրել Պրահան: «Ոսկե քաղաք» ժամանած հյուրերն ամենաշատն են գոհ եղել տեղական հյուրանոցների գների ու որակի համապատասխանությունից:

Առաջին եռյակում են նաև Վարշավան ու Բուդապեշտը:


Վարկանշային աղյուսակի 4-րդ հորիզոնականում հայտնված Օտտավայում որակին համապատասխան աճել են հյուրանոցների գները:

Առաջին տասնյակում են նաև Բեռլինը, Լիսաբոնը, Բուխարեստը, Տոկիոն, Վիեննան ու Մադրիդը: Ցուցակում այս քաղաքներին հաջորդում են Շանհայը, Ստամբուլը, Ջոհաննեսբուրգը, Յեթսինգի, Աթենքը, Ջոնկոնգը և Բուենոս Այրեսը:



Մինչդեռ Բրյուսելի, Ցյուրիխի և Փարիզի հյուրանոցների այցելուներն առանձնապես գոհ չեն եղել: «Սիրո քաղաք» Փարիզը եզրափակել է ցուցակը:

Նշենք, որ իտալական Կապրի կղզում, ժնկում ու Նյու Յորքում, Hotels.com-ի վերջին հետազոտության համաձայն՝ աշխարհում ամենաթանկ հյուրանոցներն են: 📌



ԱՐՏԱՍՈՎՈՐ ԲԻԶՆԵՍԻ ՓՆՏՐՏՈՒՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ.

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՅԵՏԱՔՐՔԻՐ ՀՅՈՒՐԱՆՈՅՆԵՐԸ

Դրանք, պարզվում է, լավ էլ շահութաբեր են...



Հյուրանոցի Upside Down կոչվող համարներից մեկում էլ կարող եք այնպիսի զգացողություն ունենալ, որ աշխարհը շրջվել է. այդտեղ մահճակալն առաստաղին է, լուսամփոփն էլ՝ հատակին:

կարող եք այնպիսի զգացողություն ունենալ, որ աշխարհը շրջվել է. այդտեղ մահճակալն առաստաղին է, լուսամփոփն էլ՝ հատակին:

Նույն հյուրանոցում, ի դեպ, կարող են առաջարկել նաև վանդակապատ սենյակ: Պարզվում է, ցանկացողները շատ են...

Իսկ հիմա ուշադրություն. Նրանք, ովքեր իրենց

ճնշված են զգում հասարակ կամ չափազանց գունդ սենյակներում, կարող են կանգ առնել Ավստրալիայի The Old Jail հյուրանոցում: Դրա սեփականատերերը պնդում են, որ իրենց հաճախորդներն իրենց պաշտպանված և անվտանգ են զգում... հուսալի բանտային բարձր պատերի հետևում: Այդտեղ կարելի է զբոսնել փշալարերով պատված բակում:

Անմոռաց գիշեր ոչ միայն հաճելի ընկերակցության, այլ նաև՝ արտասովոր միջավայրի շնորհիվ: Աշխարհում այնպիսի հյուրանոցներ կան, որոնց համարներին դժվար թե տանք standard room բնորոշումը:

Օրինակ, եթե դուք հայելիների սիրահար եք, ապա բեռլինյան Propeller Island City Lodge հյուրանոցը ձեզ «հայելային» սենյակ կառաջարկի, որն ամբողջությամբ պատված է հայելիներով. հիացեք ձեզանով որքան կամենաք, միայն թե մի մասին էլ դա կարող է պարզապես խելքահան անել՝ ոչ դրական իմաստով:

Այս հյուրանոցի միակ դիզայներ Լարս Շտրոտենը վստահ է, որ միջավայրը կարող է փոխել ցանկացած հաճախորդի գիտակցությունը: Այնպես որ, հյուրանոցի Upside Down կոչվող համարներից մեկում էլ

Dog Bark Park Inn. ամերիկյան հյուրանոց՝ հատկապես շան սիրահարների համար: Ով այստեղ եղել է, տպավորված է առավելապես ննջարանով, որը տեղակայված է...այո, հենց



Գետի ափին բետոնե խողովակներ են տեղակայել և ցանկացողներին առաջարկում են գիշերել այդտեղ:



շան մռութի մեջ: Որպեսզի հաճախորդը չտխրի, մասնագետները պատրաստ են սրան սովորեցնել հաց թխել կամ, օրինակ, օճառ պատրաստել, նաև՝ բիզնես-պլան կազմել:

Երբևէ պատկերացրե՞լ եք, որ բետոնը կարող է հարմարավետ լինել: Պարզվում է՝ կարող է. ավստրիական Das Park Hotel-ի տերերն են համարձակվել դա ապացուցել: Նրանք գետի ափին բետոնե խողովակներ են տեղակայել և ցանկացողներին առաջարկում են գիշերել այդտեղ:

Իսկ միգուցե ուղևորվել դեպի Չիլիի Magic Mountain Hotel, որը հեքիաթային լեռի հենց ջրվեժի տակ է գտնվում: Միայն թե այդտեղ հայտնվելու համար նախ պետք է ռուբլյոն



«ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐՈՒՆԵՐ» ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

«Եվրո-2012»-ի նախաշեմին Ուկրաինայի հյուրանոցները 10 տարով ազատվում են շահութահարկից. համապատասխան հրամանագիրը երկրի ղեկավարն արդեն ստորագրել է, և փոփոխությունը գործում է այս տարեսկզբից:


Սա Էական որոշում է ամբողջ ճյուղի համար, թեև բոլորը չէ, որ կարող են օգտվել այդ արտոնությունից: Շահութահարկից ազատվում են 3, 4 և 5 աստղանի հյուրանոցները: Մասնագետների դիտարկմամբ, հարկային ճնշման թուլացումը դրական կանդրադառնա հյուրանոցային բիզնեսի վրա, թեև գների իջեցում չի կանխատեսվում. «Եվրո-2012»-ի նախաշեմին պահանջարկը մեծ է:



հաղթահարել՝ անցնելով երկար և այդտեղի ծառերի բարձրության կախովի կամրջի վրայով:

Հաճախորդներն իրենց պաշտպանված և անվտանգ են զգում... հուսալի բանտային բարձր պատերի հետևում: Այդտեղ կարելի է զբոսնել փշալարերով պատված բակում:

Ո՞վ գլխի կընկներ, որ նավահանգստի իսկայական ամբարձիչ կռունկը ևս հյուրանոց է... Եվ բավականին հարմարավետ: Սիդեռլանդների Crane Hotel-ի բարձունքից ծովից բացի ոչինչ չեք տեսնի: 🏰




ԱՏՈՐՋՐՅԱ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԸ

Ի՞նչ կարծիքի եք օվկիանոսի հատակին ձկների հետ գիշերելու հեռանկարի մասին: Հետաքրքրե՞ց. «Լյուքս» դասի հյուրանոցներն օրեցօր Էկզոտիկ մտահղացումներ են իրագործում՝ հաճախորդներին արդեն առաջարկելով հանգիստն անցկացնել ծովի հատակին՝ հատուկ հյուրանոցի համարներում:



Մինչ դուք հիանում եք ձկներով, ձեզ կարող են զուգահեռ բազմազան մերսումներ առաջարկել:

դացող առանձնատներով, որտեղ ևս օվկիանոսի հատակին նայող պատուհաններով սենյակներ կան: Բայց եթե դա էլ բավական չէ, ապա կարող եք նաև ընթրիք պատվիրել ստորջրյա ռեստորանում, որի կառուցման համար սեփականատերը 5մլն դոլար է ծախսել: Այստեղ էլ մեկ գիշերի արժեքը նվազագույնը 510 դոլար է:



Hydropolis, Չինաստան

«Hydropolis Crescent Group» ընկերությունն էլ ծրագրում է ստորջրյա հյուրանոցների համաշխարհային ցանց ստեղծել: Առաջինն իր դռները բացել է չինական Ցինդաո քաղաքում՝ Դեղին ծովի ափին: Այս հյուրանոցն իրենից հսկայական համալիր է ներկայացնում՝ բազմաթիվ ռեստորաններով, խանութներով, պարահանդեսի սրահներով:

Huvafen Fushi, Մալդիվյան կղզիներ

Սա Մալդիվներում ամենագլամուրային վայրերից է: Այստեղ խորհուրդ չի տրվում կոշիկներով մնալ, քանի որ անգամ հյուրանոցի հատակը օվկիանոսի ավազով է պատված: Հաճախորդների տրամադրության տակ Նորագույն տեխնիկայով հագեցած 43 համար կա: Ստորջրյա հյուրանոցի պատուհաններից կարող եք անվերջ հետևել օվկիանոսի «բնակիչների» առօրյային:

Կարող եք նաև ընթրիք պատվիրել ստորջրյա ռեստորանում, որի կառուցման համար սեփականատերը 5մլն դոլար է ծախսել:



Եվ մինչ դուք հիանում եք ձկներով, ձեզ կարող են զուգահեռ բազմազան մերսումներ առաջարկել: Միայն թե այս հյուրանոցում համարը պետք է նախապես պատվիրել. օվկիանոսի հատակին մեկ գիշեր անցկացնելը սկսվում է 800 դոլարից:

The Hilton Maldives Resort & Spa

Մալդիվյան միանգամից երկու կղզիների վրա գտնվող այս հյուրանոցն էլ հայտնի է իր լո-

The Poseidon Resort

Այս հյուրանոցը պատկանում է «U.S. Submarines» ընկերության նախագահ Բրյուս Ջոնսին, ով հայտնի է ջրա-



սույգ նավերի /մեկ նավի արժեքը 80մլն դոլար է/ կառուցմամբ: Այնպես որ, նա հրաշալի ծանոթ է ստորջրյա կյանքին: Նրան

պատկանող ստորջրյա հյուրանոցում 24 համար կա, որոնք հագեցած են հեռուստացույցով, մարմարե լոգարաններով, նաև գրադարանով: Սենյակների 70 տոկոսն ապակի է: Ի դեպ, ծովի հատակին նաև կինոսրահ կա, պսակադրությունների համար նաև մատուռ է կառուցվել: 📺